


**Universitäts- und Landesbibliothek Bonn**  
**Trdatay arandznananlě, verjin ōrern u meronilě**


**Sipilean, Kghemēs**


**Vienna, 1851**

**urn:nbn:de:hbz:5:1-12530**

Goussen 3577











Գին՝ Ֆր. 2. 00



S P T U S

2 1 4 2



Ն 3577

# Տ Ր Դ Ե Տ Ե Յ

ԵՌԵՆՁՆԵՆԵԼԸ

Վ Ե Ր Զ Ի Ն Օ Ր Ե Ր Ն

Ո Ի

Մ Ն Ռ Ն Ի Լ Ը

Գ Ր Ե Յ

Հ. ԿՂԵՄԷՍ ՍԻՊԻԼԵՆՆ

ՄԻԻԹ. ՈՒԽՏԷՆ



Վ Ի Է Ն Ն Ը

ՊԸՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1851. ՌՅ

13577

2-1-1878

RECEIVED

W. B. R. O. P. R.

1878

LIBRARY

1878

W. B. R. O. P. R.

LIBRARY



1878

W. B. R. O. P. R.

1878

# Տ Ր Դ Ե Տ Ե Յ

## Ե Ռ Ե Ն Չ Ն Ե Ն Ե Լ Ը

### Վ Ե Ր Զ Ի Ն Օ Ր Ե Ր Ն

Ո Ի

### Մ Ե Ռ Ն Ի Լ Ը

**ՏՐԴԱՏԱՅ** թագաւորութենէն հրաժարիլն, առանձնանալն ու մահը՝ մեր ազգային պատմութեան դրսխաւոր ողբերգական նիւթերէն մէկը կրնայ սեպուիլ:

Տրդատ իր թագաւորութեան ատեն Հայաստանին մեծամեծ բարիքներ ըրած էր, մանաւանդ քրիստոնէութեան դառնալէն ետքը՝ սաստիկ կը ջանար որ քրիստոսական կրօնին օգնութեամբը՝ բարոյականութիւնը, քաղաքական կարգն ու կանոնը ծաղկեցընէ եւ նախարարներուն եռանդն արթընցընէ, որ իր բարի բաղձանացը նպաստաւոր ըլլան ու երկիրը շէնցընելու փոյթ տանին: Աս բաղձանքը թէպէտ ըստ մասին կատարուեցաւ, բայց շատ անգամ ալ անպտուղ կը մնար. մանաւանդ իր ծերութեան ատեն՝ նախարարներն իրեն նեցուկ ըլլալու եւ տէրութեան ու ազգին յառաջադիմութեան նպաստելով՝ իրենց հայրենեաց հօրը միտիթարութիւնն աւելցընելու տեղ, կարծես թէ անոր սրտին ցաւն ու դառնութիւնը սաստկացընելու կը ջանային:

Աս իրենց անկարգ ընթացքն ու կռապաշտու-  
թեան միտելնին՝ թագաւորին սրտին մեծ վիշտ էր-  
կու լար կ'ողբար անոնց վրայ ու չէր կրնար մխիթա-  
րուիլ: Շատ անգամ առանձին իր ներքին խուցը  
քաշուած՝ տրամալի խորհրդածութեանց մէջ կ'ըն-  
կըզմէր կը մնար: Յաճախ կը յորդորէր զանոնք որ  
աս ծուռ ճամբէն ետ կենան, իրենց հպատակները  
չհարստահարեն, հայրենեաց օգտին դէմ չգործեն,  
երկպառակութիւնները մէկգի ձգեն, իրարու հետ  
միաբան ըլլան. բայց բոլոր իր ջանքն ու ճիգն անօ-  
գուտ եղաւ:

Արբ որ ամէն միջոց պարապ ելաւ, ան ատեն Տըր-  
դատ միտքը դրաւ որ թագաւորութենէն հրաժարի  
եւ իր վերջին օրերն առանձնութեան մէջ անցընէ:  
Իրօք ալ աս խորհուրդն ի գործ դրաւ. քաշուեցաւ  
Լուսաւորչայ սրն եւ հոն ապերախտ ու տիրանենդ  
նախարարաց ձեռքով թունաւորուելով մեռաւ:

շտու-  
տ էր-  
իթա-  
խուցը  
կ'ըն-  
ք որ  
կները  
բժեն,  
Հետ  
անո-

Տըր-  
ժարի  
ցընէ:  
ւեցաւ  
անենդ  
:

# Ե.

ՄԵՐՈՒՆԻ Թագաւորն իր հրաժարելուն օրը՝ ներ-  
քին խցին մէջ առանձին նստած ատեն՝ մինչեւ նոյն  
ատեն պատահածներն յիշելով, սկսաւ ասանկ հե-  
ծել եւ ողբալ:

Արանի՛ թէ քիչ մ'ալ ուրիշ բանի վրայ կարող  
ըլլայի մտածել, կարենայի աս տաղնապեցուցիչ խոր-  
հուրդները քիչ մը մտքէս հեռացընել: Բայց ան-  
կարելի է... քանի անգամ որ աս խցիս մէջ ասանկ  
մինակ կը նստիմ, միշտ նախարարներուս անզգա-  
մութիւններն աչքիս առջեւը կը նկարուին: Ա՛հ, ան  
քրիստոնէական կրօնին մէջ ունեցած թուլութիւն-  
նին ու ժողովրդեան տուած չար օրինակնին, եւ իմ  
սիրելի ազգս, իմ անձկալի զաւկըներս հարստահա-  
րելնին՝ կրած անձնական նեղութենէս աւելի սիրտս  
կը վերաւորէ ու ծերութեան օրերս դառնութեամբ  
կը լեցընէ: ... Գոնէ քիչ մը դուրս ելլեմ, որ միտքս  
ցրուի ու մխիթարութիւն մը գտնեմ: ...

Բայց աս ալ պարապ է, նոյն դժբախտ խորհուրդ-  
ներն ինձի հաւատարիմ ընկեր եղած են. առտու  
իրիկուն, քնոյ եւ արթնութեան ատեն, ամէն տեղ

ամէն ժամանակ քովէս չեն զատուիր: Մարմնոյս  
չքին պէս միշտ ետեւէս կու գան ու երբեք ինձմէ  
չեն բաժնուիր: Ինչպէս որ որսորդի նետէ խորունկ  
վիրաւորած առիւծն՝ ուր որ երթայ նոյն մահաբեր  
երկաթն հետը կը տանի, այսպէս ես ալ աս զիս վի-  
րաւորող սոսկալի մտածմունքները միշտ հետս կը  
կրեմ, միշտ զիս կը հալածեն . . . :

Արչափ ջանացի որ ազգս կարգով կանոնով ծաղ-  
կեցընեմ, յառաջացընեմ, պայծառացընեմ. խաղա-  
ղութիւնն ու շինութիւնն ամէն տեղ տարածեմ.  
Բայց անօգնւտ . . . . իմ մեծամեծներու հաճոյքը՝  
զիս տրտմեցընելու վրայ կայացած է: Բարի խոր-  
հուրդ մը տալու բերանս յառաջ չ'երթար, վասն զի  
գիտեմ որ անոնք հակառակը պիտ'որ ընեն: Անկար-  
գութիւններն ու խռովութիւններն ալ օրէ օր շատ-  
նալու վրայ են:

Քանի մը օր յառաջ դեռ քիչ մը յոյս ունէի.  
Բայց ան վերջին ժողովքը . . . ո՛հ ան չարագուշակ  
ժողովքը բոլոր ակնկալութիւններու վերջ տուաւ:  
Յուսալով որ տրտմութիւնս ու ցաւերս տեսնելով՝  
գէթ քիչ մը ճամբու կու գան, զիրենք խորհրդի  
ժողովեցի . . . բայց մէյ մը իրենց նայելուս պէս՝ սր-  
տերնուն չարութիւնը յայտնապէս տեսայ. ներքին  
անպիտանութիւննին երեսնին զարկած էր. դեղըն-  
ցած ու խռոված գէմքերնին՝ խղճերնուն անհանգըս-  
տութեան վկայ էր: Ասանկ պարագայի մը մէջ ինչ  
կրնայի խօսիլ . . . ոչինչ . . . : Բայց ասով ալ իրենց  
սրտմտութիւնը դուցէ աւելի եւս կը զայրացընէի . . . :  
Սակայն ինչ խօսէի, ինչ ըսէի . . . : Քանի անգամ  
որ խօսելու պատրաստուեցայ, ձայնս կտրեցաւ, չկր-  
ցայ բան մը զրուցել: Երկայն հառաչանքներէ ետքը՝  
գոնէ մէկ երկու խօսք կ'ուզէի ըսել, բայց խռովու-  
թիւնս չէր թողուր. մինչեւ մէջերնէն մէկը՝ կերպա-  
րանացս այլայլութենէն սրտիս անձկութիւնն իմա-

նալով՝ շփոթած ոտքս ինկաւ . Տէր իմ, ի՞նչ է պատուէրդ, ըսաւ, ի՞նչ կ'ուզես հրամայել . տէր արքայ, պատրաստ ենք ամէն հրամաններդ ճշդիւ կատարելու :

Այն խօսքէն ոգի առած՝ այսչափ միայն կրցայ ըսել . Չեղի կը յանձնեմ որ կռապաշտութեան սովորութիւններն ու անկարգութիւնները մէկ դի թողուք, հպատակներնիդ սիրէք, հայրենեաց բարութեանը վրայ հսկէք, օրէնքները ձեզի առաջնորդ ունենաք: . . .

Աս ըսելով ժողովքը գոցեցի ու մեծամեծներն իրենց շփոթութեան ու ամօթոյն մէջ թող տալով եւ արքունեացս վայելչութիւններէն ու զուարճութիւններէն փախչելով՝ առանձին ներքին սենեակս քաշուեցայ : . . . Ո՛հ ան քաշուիլը, ո՛հ ան առանձնութիւնը . . . ինչպիսի ցաւերու պատճառ եղաւ ինձի . աս ծանր բեռը վրաս առնելուս սրչափ անէծք կարդացի: . . . Քանի՛ անգամ դուռս զարնող եղաւ, չկրցայ բանալ . կը վախնայի որ ան անգգամ երեսներէն մէկը կը տեսնեմ: Արքունեաց հաճոյքն ինձի թոյն էր, սենեկիս գեղեցկութիւնն ինձի բանտ կերելար: Չգեմ փախչիմ՝ կ'ըսէի, ազգիս սէրը թող չէր տար: Ա՛հ, ի՞նչ դժբախտութեան մէջ կրնայ եղեր իյնալ թագաւոր մը, երբ որ չար խորհրդականներու հանդիպի: Արնայի՞ արդեօք հաւատալ թագաւորի մը այսպիսի դժբախտութեան, թէ որ փորձն առած չըլլայի: . . . . .

Բայց աս ի՞նչ է . . . մէկը նորէն դուռս կը զարնէ: . . . Գուցէ կը սխալիմ, մարդ պիտի չըլլայ: . . . Չէ . . . ահաւասիկ . . . նորէն կրկնուեցաւ . . . : Մէկը զիս կը կանչէ . . . : Որո՞ւն ձայնն է . . . բանամ արդեօք . . . :

Քու հաւատարիմ ծառայ եմ, կ'ըսէ: . . . Հաւատարիմ . . . : Չիկրնար ըլլալ . . . իմ մարդիկներու

սրմնոյս  
ինձմէ  
որունկ  
հարեր  
իս վի-  
տոս կը  
ծաղ-  
աղա-  
սծեմ .  
ճոյքը՝  
խոր-  
ան զի  
նկար-  
չատ-  
ունէի .  
ուշակ  
ուաւ :  
նկով  
րհրդի  
' սր-  
երքին  
եղըն-  
նդրս-  
' ինչ  
իրենց  
ի . . . :  
նգամ  
չկր-  
տքը՝  
ովու-  
ուպա-  
իմա-

մէջ հաւատարիմը չկայ: . . . Բայց չէ. . . . Սմբատ: . . . անոր վրայ վստահ եմ: . . . Ո՛հ, ի՞նքն է արդեօք: . . .

Աս բոպէին մէջ ո՞վ կրնար ճանչնալ ան առիւծաօրտ թագաւորն՝ որն որ ամենամեծ վտանգներու մէջ աներկիւղ հաստատութեամբ անվրդով կը կենար. հիմա նոյնը չէ. այլայլութենէն ու իր հաւատարիմ Սմբատը տեսնելու յուսէն կը սկսի դողալ, սիրտը սաստիկ կը զարնէ: Մէկէն վեր կը ցատքէ, արիւնը տակնուվրայ կ'ըլլայ, ձեռքը դողդողալով դուռը կը բանայ: Մէյ մ'ալ. . . ո՛հ ուրախութիւն. . . ստուգիւ Սմբատ ներս կը մտնէ: Թագաւորը խնդութենէն գրեթէ ինք իրմէ ելլելով եւ իր արքունական աստիճանը մոռնալով՝ մէկէն հաւատարիմ նախարարին վիզը կը նետուի, Սմբատ, տես իմ թշուառութիւնս, ողբա վրաս, կը կանչէ:

Տէր արքայ, մի խռովիր, պատասխան կու տայ տիրասէր պաշտօնեան. եթէ մինակ ես, ահա ես քեզի ընկեր կ'ըլլամ. եթէ տրտում ես, ձեռքէս եկածին չափ քու տխրութիւնդ փարատելու, զքեզ սփոփելու, մսիթարելու պատրաստ եմ: . . . Բայց գիտեմ, նախարարներուն անկարգութեանց վրայ կը ցաւիս. անոր ալ ճար կայ, անոր ալ դարման կայ: Ես իրենց համար երաշխաւոր կ'ըլլամ որ ասկէ ետեւ քու բարերար պատուէրներուդ կը հնազանդին. ամենեւին հոգ մ'ըներ, անոնց ամօթը զիրենք ուղղելու բաւական է:

— Չէ, Սմբատ, չէ. . . . շատ հեղ փորձն առած եմ. խոստումնին մինակ բերնով է. անոնց կանոնն՝ իրենց անկարգութիւնն է. յոյսս կտրած եմ. . . : Ասանկ ամբարիշտներն Աստուած ալ պատժել կ'ուզէ նէ, իրենց կամքին թող կու տայ. . . իրենցմէ կը հեռանայ. . . ես ալ ասկէ ուրիշ դարման չեմ գտներ. . . :



Հաստ :  
է ար-  
առիւ-  
քներու  
ը կե-  
հաւա-  
ողալ,  
ստքէ,  
լ դու-  
իւն...  
նդու-  
ունա-  
մ' նա-  
շուա-  
տայ  
հա ես  
եռքէս  
զքեզ  
Բայց  
այ կը  
կայ :  
ասկէ  
նդին .  
ուզ-  
առած  
նունն՝  
Բ... :  
կ'ու-  
ենցմէ  
չեմ

Սմբատ աս խօսքին զօրութիւնն իմանալով՝ հե-  
ծեծանօք թագաւորին ոտքը կ'իյնայ . աչքին ար-  
ցունքները գետինը կը թրջէին . արտասուաց առա-  
տութեամբը սրտին ցաւն յայտնել կ'ուզէր . խօսքի  
տեղ թափած լացքը կը ցուցընէր : Թագաւորին  
սիրան ալ սաստիկ շարժած ըլլալով՝ ինքն ալ կ'ու-  
զէր լալ . բայց արտասուաց աղբիւրն արդէն սպա-  
ռած էր : Սրտին նեղութիւնը լալով կ'ուզէր փա-  
րատել . բայց իշխաններն աս մխիթարութենէն ալ  
զինքը զրկած էին :

Սմբատ թափած արցունքներովը քիչ մը սփոփե-  
ցաւ , որուն վրայ Տրդատ կը նախանձէր , բայց չէր  
կրնար հետեւիլ : Մէյ մ'ալ յանկարծ ստուըներուն  
ոտքը կտրեցաւ , նստելու ստիպուեցաւ եւ այլայլած  
աչուըներով Սմբատին նայելով՝ բերնով ըսելու խօս-  
քերը՝ գոնէ աչքին նայուածքովը կ'ուզէր հասկըցը-  
նել :

Իմացաւ հաւատարիմ պաշտօնեան , որ ալ ճար  
չկայ , միտքն որոշած է : Տրտմեցաւ տիրասէր եւ  
հայրենասէր անձն՝ որ իր տէրը պիտ'որ կորսընցընէ .  
հնարք մը հոգալ կ'ուզէր , համոզիչ խօսքեր գըտ-  
նելու կը ջանար , ամէն միտքն եկած պատճառները  
բաւական չսեպելով՝ նոր պատճառ կը փնտռէր . բայց  
աչքը թագաւորին աչքէն չէր զատեր : Ասանկով եր-  
կու շարժած սիրտ աչքով իրարու հետ երկայն ա-  
տեն խօսակցեցան . սրտերնուն զարնէլն , աչուըներ-  
նուն բացուիլ գոցուիլն՝ իրենց ամենէն ազդու խօս-  
քերն էին . եւ ոչ մէկը կրցաւ բերան մը բանալ՝ աս  
նուիրական լուութիւնն աւրելու :

Արեւը կարծես թէ աս տխուր տեսարանին չկըր-  
նալով ժուժալ՝ լեռներուն ետեւը գացած պահուը-  
տած էր : Գիշերուան խաղաղ հանդարտութիւնն ,  
արքունեաց նշանաւոր լուութիւնը՝ զթագաւորն անկ-  
ողին կը հրաւիրէին , բնութիւնը նոյնը կ'ազդէր ,

յոգնած անդամները հանդիստ կը խնդրէին. բայց սիրտը խռոված, քնոյ համար պահանջուած հանդարտութիւնը կորսուած էր : . . . Տակաւին լուսթիւնը չէին կրցած ւարել . . . : Աերջապէս՝ Գնա, ըսաւ թագաւորը, գնա, հաւատարիմ բարեկամ, չեմ ուզեր որ իմ ցաւերուս գուն ալ մասնակից ըլլաս : Առանց յանցանաց չեմ ուզեր զքեզ պատժել. չեմ ուզեր աւելի երկայն ատեն քու հանգստութիւնդ ւարել : Գնա, քու տեղդ ցաւերս ինծի ընկեր թող տուր. դուն գնա հանգչէ : Ես ալ հանգչիլ կ'ուզեմ, բայց վիշտերս չեն թողուր :

Սմբատ ցաւերուն սաստկութենէն խօսք մը չկրնայով ըսել, խորունկ հառաչանքներով ու դողալու ջոտ քայլերով ականայ խցէն դուրս ելլելու ստիպուեցաւ :

բայց  
նորար-  
թիւնը  
ւ թա-  
ուզեր  
Առանց  
ուզեր  
աւրել:  
տուր.  
, բայց  
  
չկր-  
ողդու-  
ստի-

Բ.

ԱՒԱՏԱՐԻՄ պաշտօնեան դուռը գոցեց ու Տրդատ իր վշտերուն մէջ թաղուեցաւ, վերջին Լքում մը սիրտը պատեց. սովորական կերակուրն անգամ ուտելու մոռնալով՝ մէկէն զնաց անկողնոյն վրայ փռուեցաւ եւ աղետալի խորհուրդներու ովկիանոսի մը մէջ ընկղմեցաւ: Երկայն ատեն աս խորհուրդները զինքը տանջեցին: Ար մտածէր որ խել մը ժամանակէ վեր միտքը դրածը կատարելով՝ թագաւորութենէն հրաժարի. բայց խեղճ հայրենեաց վիճակը սրոյ պէս սիրտը կը խոցէր: Շատ երկայն տեւեց աս պատերազմը. վերջապէս բնութիւնն իրեն խնայեց ու խորհուրդներն անկէ հեռացրնելու համար՝ վրան թմրութիւն մը բերելով՝ քնոյ հրաւիրեց, որուն քաղցրութեան չկրնալով դէմ դնել՝ աչուրները գոցեց ու հանգչեցաւ:

Սմբատ արքունի դարպասէն դուրս ելլելէն ետքը՝ շիտակ գլխաւոր նախարարներուն երթալով ու զանոնք խռոված գտնելով, թագաւորին տրտմութեան պատճառներն սկսաւ ստորագրել ու անձկութեամբ անոնց պատասխանին կը սպասէր: Սակայն տեսնե-

լով որ անոնցմէ շատերն իրենց չարութեան մէջ  
հաստատուն են, վիրաւորեալ սրտիւ իր տեղը քա-  
շուեցաւ: Թագաւորին վշտերն ու տրամութիւնը վրան  
մեծ ազդեցութիւն ըրած էին. կը մտածէր, դար-  
ձեալ կը մտածէր ու հնարք մը չէր կրնար գտնել:  
Երկայն ատեն գլուխը ձեռքին վրայ կռթընցուցած՝  
խորունկ մտածմանց մէջ կը կենար. բայց փուչ տեղ  
խորհելէն ու ճար մը չգտնելէն ետքը նեղանալով  
ոտք ելաւ, անհաստատ քայլով մը անկողնոյն վրայ  
գնաց ինկաւ: Յաւոյր սաստկութենէն քիչ մը ատեն  
թմրած մնաց. կէս քուն, կէս արթուն՝ Թագաւո-  
րին պատկերն, ան վերջին աղիողորմ տեսիլը միշտ  
աչքին առջեւն էր, չէր կրնար մտքէն հեռացընել:  
Մէյ մ'ալ յանկարծ արթընցաւ, սարսափելով մը  
անկողնէն դուրս ցատքեց. սրտին մէջ վախ մը մտած,  
կարծես թէ իրեն ազդեցութիւն մ'եղած էր: Չըլ-  
լայ թէ, կ'ըսէր, Թագաւորին ան վերջին աստիճանի  
տրամութիւնն իրեն վնաս մը պատճառէ, չըլլայ թէ  
յուսահատական միջոցի մը ձեռք զարնէ, չըլլայ թէ  
գաղտուկ փախչի երթայ: Աս մտածմունքներն այն-  
չափ զինքը խռովեցին, որ միտքը դրաւ նորէն Թա-  
գաւորին քովը դառնալու:

Վողգոջուն օտուրներով իր ապարանքէն դուրս  
ելաւ, արքունիքն եկաւ. լուռ ու ընդարձակ սրահ-  
ներուն մէջ՝ անհանդարտ քայլով մը կը յառաջա-  
նար. սրտին մէջ վախ մը տիրած էր, ամէն տեսած  
առարկաներն իրեն տարբեր կու գային. բոլոր ար-  
քունիքն իրեն սգոյ տուն մը կ'երեւար. իր թեթեւ  
չքէն ուրիշ՝ հեան ընկեր չունէր: Ասանկ առան-  
ձնութեան մէջ ամէն խցերն ու սրահներն անցնելով՝  
վերջապէս Թագաւորին դրսի սենեկին առջեւը հա-  
սաւ: Հոն պաղեցաւ մնաց, ալ չկրցաւ աւելի մո-  
տենալ. ձեռքն յառաջ չգնաց դուռը բանալու: Ո՛հ.  
կ'ըսէր ինքիրեն, արդեօք առջեւս ի՞նչ տեսարան

պիտի բացուի. արդեօք զինքը ներսը պիտ'որ գտնե՞մ,  
արդեօք քնացած է, չէ նէ իր վշտերուն հետ կը  
խորհրդակցի:

Թիկնապահները Սմբատին այլայլութիւնը տեսնե-  
լով՝ ապշեցան մնացին. պատճառն ալ հարցընելու  
չէին համարձակեր: Քանի մը օրէն վեր արքունեաց  
խոռովութիւնը վեր ի վերոյ մը նշմարած ըլլալով՝  
չէին ուզեր զինքը մինակ ներս թողուլ. մէջերնին  
քիչ մը փսփսալէն ետքը՝ դարձան ըսին. Ինչո՞ւ թա-  
գաւորին քունն ընդմիջել կ'ուզես. գիշերուան հան-  
գիստը մեր տիրոջմէն գողնալու չենք թողուր: Եթէ  
ուրախ լուր մ'ունիս, արեւուն ճառագայթներուն  
հետ ներս բեր. եթէ դոյժ է, գոնէ ուշ իմանայ,  
դէթ աս գիշերը շահի:

Չէ, ը'նկերք, պատասխանեց Սմբատ՝ խղդուած ու  
այլայլած ձայնով մը, չէ, մեր տէրը տեսնել կ'ուզեմ.  
Թէ որ արթուն է, իրեն ընկեր կ'ըլլամ. թէ որ  
քուն է, ձեզի հետ ուրախակից կ'ըլլամ:

Գոնէ մէկտեղ ներս մտնենք, ըսին:  
Սմբատին այլայլած խօսելէն՝ կասկածնին աւելցած  
էր. չար դիպուածէ մը կը վախնային: Ո՛վ գիտէ՝  
ի՛նչ դիտմամբ ներս մտնել կ'ուզէ, կ'ըսէին: Թիկ-  
նապահաց զգուշութիւնը Սմբատին շատ հաճութիւն  
տուաւ. գովեց անոնց հաւատարմութիւնն ու կամա-  
ցուկ մը մէկտեղ ներս մտան, ներքին սենեակին  
դուռը մօտեցան: . . . Կամաց, ըսաւ Սմբատ . . . հոս  
է . . . քնանալու ձայն մը կայ . . . : Ոտքի մատուր-  
ներնուն վրայ կոխելով, իրարու նշաններ ընելով՝  
դուռը բացին, դէպ ի անկողին կը յառաջանային:  
Հոն գեղեցիկ տեսարան մը բացուեցաւ աչուրներնուն  
առջեւ. ան պարզ, ան վեհ ու յարգելի կերպարանքն  
իր բնական զուարթութեան մէջ կը տեսնէին. ան  
լայն ճակատն, ան դէմքին արիութիւնը՝ հոգւոյն վսե-  
մութեան պատկեր մըն էր . . . : Կամաց, . . . կրկնեց

Սմբատ, կամանց, չարթըննայ . . . : Գէպ ի մեզի դար-  
ձաւ . . . կամանց կոխեցէք . . . : Թող տանք որ հան-  
գիստը վայելէ, թող տանք որ դժ առնու : Ետ ետ  
քաշուեցան ու դրան մօտիկցան : Գուք, ըսաւ Սըմ-  
բատ, դրան քովը կեցէք. ես դուրս չեմ ելլեր,  
թագաւորին քովը կ'ուզեմ կենալ, քունս անոր կը  
զոհեմ. զինքը տեսնելա՝ ինձի մեծ վարձք է, ինձի  
քնէն աւելի հանգիստ է : Թիկնապահներն աս խօս-  
քերուն զօրութիւնը չկրցան հասկընալ. չէին իմանար  
թէ ի՞նչ բանի կը սպասէր. իրենք գէպ ի դրան քո-  
վը քաշուած՝ աս տեսարանին վախճանին կը սպա-  
սէին : Սմբատն ալ անկողնոյն մօտ նստած՝ շարունակ  
թագաւորին երեսը նայելով՝ կը զուարճանար, կը  
զարմանար, կ'ապշէր, կը տարակուսէր. նորէն կը նայէր  
ու անոր կերպարանացը վրայ փոփոխութիւն մը կը  
նշմարէր : Թագաւորին երեսն երբեմն զուարթ, եր-  
բեմն տրտում կ'երեւար. կարծես թէ հոն ներկայ  
եղող մէկու մը հետ կը խօսակցէր : Անցաւ երկու  
ժամէն աւելի. գեռ հաւատարիմ պաշտօնատէրն հոն  
նստած պահպանութիւն կ'ընէր :

Մէյ մ'ալ յանկարծ թագաւորն արթընցաւ.  
կերպարանացը վրայ տրտմութեան եւ ուրախութեան  
զգածմունքներ կ'երեւային. մէկէն դուրս ցատքեց  
ու գէպ ի Սմբատ դառնալով՝ Ո՛հ, ըսաւ, ալ կ'եր-  
թամ. ասանկ հրաւեր ունիմ : Սմբատ խռոված գէմ-  
քով մը թիկնապահներուն աչք ըրաւ որ դուրս ել-  
լեն :

Անոնք երթալէն ետեւ թագաւորը խօսքն այս-  
պէս շարունակեց. Երբ որ անձկութեամբ անկողինն նե-  
տուեցայ ու շատ մը տանջուելէն ետքը քունս տա-  
րաւ, յանկարծ զիս լերան մը վրայ գտայ, սկսայ չորս  
կողմը պտրտիլ : Քանի մ'անգամ վեր վար գացի ե-  
կայ, վերջապէս դիմացս պզտիկ անտառ մը տեսնելով՝  
անոր մէջ մտայ ու քիչ մը հանգիստ առի : Նորէն

ոտք ելած՝ ասդին անդին պտրտելու ժամանակս՝ հե-  
ռուէն աչքիս յարգելի ծեր մ'երեւցաւ :

Իսկզբան վախ մ'ունեցայ, բայց սիրտ ըրի, սա-  
կայն միշտ կասկածանքով, դէպ ի ան կողմն սկսայ  
յառաջանալ : Մտադրութեամբ մը շարունակ ան մե-  
ծարոյ ծերունւոյն կը նայէի : Քանի կը մօտիկնայի՝  
տարակոյսս ու վախս կը փարատէր : Երբ որ քովը հա-  
սայ, տեսնելով ան յարգելի ալեւորին վեհ բայց  
քաղցր կերպարանքը, վայելուչ երկայն զգեստը, ձեան  
պէս ճերմակ յօրուքը, պայծառ ու փայլուն ճակատն  
եւ զուարթ դէմքն՝ որ զիս ընդունելու եւ մխիթա-  
րելու պատրաստութիւն մը կը ցուցընէր, սիրտս ու-  
րախութեամբ լեցուեցաւ :

Ի՞նչ կ'ուզես հոստեղերս, ըսաւ քաղցրութեամբ  
մը, ի՞նչ կը փնտռես :

Մէկանց ձայնէն ճանչցայ թէ իմ հաւատարիմ  
բարեկամս, իմ պատուական ազատիչս ու մեր հայ-  
րենեաց լուսաւորութեան հայրն էր : . . .

Հոս Սմբատին սիրտն ելաւ, Լուսաւորչայ յիշատա-  
կան աշուրներն արցունքով լեցուեցան. թագաւորն  
ալ խռովեցաւ, ձայնը կտրեցաւ, սկսաւ հառաչել .  
այլայլութիւնը քանի գնաց շատցաւ, մինչեւ ծնկուր-  
ները թոյլնալով՝ Սմբատ զինքն աթոռի մը վրայ  
նստեցուց ու հառաչանքով իրարու կը նայէին : Քիչ  
մ'ատեն ասանկ կենալէն ու թագաւորը հանդարտե-  
լէն ետքը՝ պատմութիւնը շարունակեց : Սմբատ ալ  
քովը կեցած՝ անհանդարտ դէմքով մը տեսիլքին  
կատարածը կ'ուզէր իմանալ :

Մէկէն անոր ոտքն ինկայ, ըսաւ թագաւորը,  
սրտիս անձկութիւնն յայտնեցի. նախարարաց ու մե-  
ծամեծաց անկարգութիւնները մէկիկ մէկիկ աչքին  
առջեւը գրի :

Գիտեմ գիտեմ, մի խռովիր, պատասխանեց . թող  
որ անոնք մինակ մնալով պատժուին. դուն իմ ե-

տեւէս եկուր: Եկուր զքեզ իմ հանգստեանս բնա-  
կարանը տանիմ, տես թէ ի՞նչ երջանկութիւն կ'ու-  
նենաս հոն, աշխարհքիս զբաղմունքներէն հեռա-  
նալով:

Ասանկ խօսակցութիւններով սկսանք անտառին  
մէջէն յառաջ երթալ: Մէյ մ'ալ առջեւնիս պղտիկ  
դաշտ մը բացուեցաւ, որուն ծայրը չափաւոր մեծու-  
թեամբ անձաւ մը կար: Հոն որ հասանք՝ Ահա, ը-  
սաւ, իմ ու քու հանգստեան տեղերնիս. հոս կրնաս  
հանգարտութիւնդ գտնել:

Աս ըսաւ ու աներեւոյթ եղաւ: Ես ալ այլայլու-  
թենէս մէկէն արթընցայ ու զքեզ իմ հաւատարիմ  
պաշտօնեաս գտայ: Անշուշտ Աստուծոյ մասնաւոր  
նախախնամութեամբն եղաւ որ դուն հոս գտնուե-  
ցար, որպէս զի շուտ մը պատրաստութիւն տեսնելու  
օգնես եւ զաղտուկ արքունիքէն դուրս ելլելուս  
նպաստես...: Ա՛լ միտքս հաստատութեամբ որոշած  
եմ, չեմ կրնար իմ վարդապետիս ու բարեկամիս  
հրաւիրին չհետեւիլ:

Սմբատ թագաւորին աս որոշմանը վրայ խիստ այլ-  
այլելով՝ բոլոր ճգամբ միտքը փոխելու կը ջանար.  
Ստուգիւ, կ'ըսէր, նախարարներն ըրածներնուն վրայ  
զղջացած պիտ'որ ըլլան:

Ամենեւին մի յուսար, պատասխանեց թագաւո-  
րը, չե՞ս գիտեր թէ ի՞նչպէս ամէն օրինաւոր իշխա-  
նութեան դէմ են. ամենեւին օրէնք ճանչնալ չեն  
ուզեր:

— Գիտեմ, գիտեմ, արքայ, բայց . . . :

— Չե՞ս յիշեր որ երկրին բարի օրէնք մը դնել  
ուզելուս պէս՝ ամէնն ալ դէմ կ'ելլէին. հայրենեաց  
ընդհանուր բարիքն հոգալու տեղ՝ միայն իրենց դիւ-  
րութեան ու հանգստութեան միտ կը դնէին: Քա-  
նի անգամ իրենց աղաչած եմ որ ժողովուրդը չկե-  
ղէքեն, արդարութիւնը պատուեն, աղքատաց հայր



ըլլանին ցուցրնեն. բայց անօգնւտ: Ասանկ խրատ-  
ներով կարծես թէ սրտերնին աւելի կը խստանար,  
իրենց չարութեան մէջ աւելի կը հաստատուէին: Ին-  
ծի օգնական ըլլալու տեղ, մատնութեան ու անաս-  
տութեան կիրքերը կը սնուցանէին: Սիրելի Սմբատս,  
պարապ տեղ զիս համոզելու մի ջանար. յիսուն տա-  
րիէն աւելի է որ աս ըսածներուս փորձը կ'առնեմ.  
այսչափ երկայն փորձը բաւական է. այնչափ ժամա-  
նակ ունեցած ակնկալութիւններս պարապ ելլելէն  
ետքը՝ նորէն յուսալը տկարամտութիւն է: Գուն նայէ  
որ ինծի ճամբորդի զգեստ մը հոգաս, որպէս զի  
առտու շեղած՝ կարենամ ճամբայ ելլել:

Սմբատ տեսնելով որ ալ միտքը դարձրնելն ան-  
կարելի է, հեծելով գլուխ ծռեց, զինքն ամէն հրա-  
մանի պատրաստ ցուցուց եւ հարկաւոր բաներն հո-  
գալու համար դուրս ելաւ, միտքը դնելով որ ինքն  
ալ մէկտեղ երթայ եւ իր սիրելի թագաւորէն ա-  
մենեւին չբաժնուի:

Քիչ մը ետքը Սմբատ պատրաստուած զգեստներով ետ դարձաւ: Թագաւորն ասոր վրայ մեծ հաճութիւն ցուցընելով՝ անոր հետ խցէն դուրս ելաւ ու թիկնապահաց հրաման տալով որ զգոյշ կենան եւ ներս մարդ չթողուն, իրենք յառաջ գացին: Լռիկ մնջիկ սրահներն անցան ու առանձինն խուց մը մտնելով՝ Տրդատ իր արքունական զգեստները փոխեց եւ աղքատին զգեստներ հագաւ. նոյնպէս Սմբատ ալ իր նախարարութեան զարդերն ու նշանազգեստը հանեց: Այնպէս ծպտած՝ արքունեաց դուռը հասան. հոն կեցաւ թագաւորը, սրտանց հառաչանք մ'ըրաւ. Մնաս բարով, ըսաւ, ո՛վ վշտերու եւ ցաւերու բնակարան. մնաս բարով. ալ զքեզ պիտի չտեսնեմ: Պալատէն ելան, լայն ու ընդարձակ փողոցներէն սկսան յառաջ երթալ: Կէս ժամի մօտ քալելէն ետքը՝ առանց մէկէ մը ճանչցուելու՝ քաղքին արեւմտեան դռնէն կրցան դուրս ելլել:

Ճամբան միշտ անբարբառ կ'երթային: Սմբատ խիստ այլայլած եւ խռոված էր. առած քայլերը բռնի էին, միշտ աչքն ետեւը կը դարձընէր. միշտ

կուզէր որ թագաւորն իր միտքը փոխէ . բայց զիտ-  
նալով որ անկարելի է, բերան չէր բանար եւ լռու-  
թեամբ անոր ետեւէն կ'երթար: Աերջին անգամ  
մ'ալ Տրդատ գլուխը դարձուց ու քաղքին վրայ  
նայելով՝ Այ ապերախտ քաղաք, ըսաւ, ահա այս-  
պէս ստիպեցիր որ քու թագաւորդ, քու հայրդ  
զքեզ որք թողու . . . : Ահ, որչափ զքեզ աւելի  
սիրեցի նէ, այնչափ աւելի ինձի տառապանք ու նե-  
ղութիւն հասցուցիր . . . : Երթանք, կ'ըսէր Սմբա-  
տին, աճապարենք, հեռանանք. պաշտօնեան ալ  
արիութեամբ նորէն սկսաւ քալել. սրտին հեծու-  
թիւնն՝ առած խորունկ շնչովը կը յայտնէր:

Արկայն ատեն այսպէս քալելէն ետեւ՝ Տրդատ  
յոզնած ըլլալով՝ քիչ մը կեցան եւ մարգագետնոյն  
վրայ հանգչեցան: Արեւը դեռ չէր երեւար, բայց իր  
յառաջարձակ լոյսը զիրենք քիչ մը կը լուսաւորէր.  
Գիշերուան վերջին մասին լռութիւնն ու երկինքին  
պայծառութիւնը գեղեցիկ տեսարան մը կ'երեւցընէր:

Թագաւորը Սմբատայ շարժումքէն կ'իմանար  
թէ ըսելէք մ'ունի, բայց չի համարձակիր. ուստի եւ  
ստիպեց որ չվախնայ, մտածածն ըսէ: Ան ալ հա-  
մարձակութիւն առնելով՝ Տէր արքայ, ըսաւ, ո՞ւր  
պիտի կենաս, ո՞ւր պիտի հանգչիս. եթէ ստուգիւ  
առանձնութեան մը մէջ պիտի բնակիս նէ, չեմ ու-  
զեր, չեմ կրնար քեզմէ զատուիլ: Թէ որ հրաման  
կու տաս, միշտ քեզի հետ մնամ ու քու կենացդ  
հաւատարիմ պահապանն ըլլամ:

Թէպէտ Տրդատ՝ Սմբատայ աս հաւատարմութեան  
վրայ շատ ուրախացաւ, բայց չուզեց հաւանիլ: Ազ-  
նիւ Սմբատս, ըսաւ, չեմ կրնար խօսքով բացատրել  
թէ աս քու սերդ սիրտս որչափ կը շարժէ. եւ եթէ  
կարելի ըլլար, ես ալ ամենեւին չէի ուզեր որ ինձմէ  
հեռանաս. բայց պէտք է որ բաժնուինք: Սմբատս,  
հայր եմ, որդի ունիմ. պէտք է որ իմ տեղս դռնէ

ստանե-  
հա-  
ու ելաւ  
կենան  
Լռիկ  
մըտ-  
փոխեց  
Սմբատ  
գետտը  
ը հա-  
աչանք  
ցաւե-  
չտես-  
լոցնե-  
քալե-  
աղքին  
  
Սմբատ  
այլերը  
միշտ

դուն զաւելիս քով կենաս, իրեն առաջնորդես: Անոր քովը մնալովդ՝ ինձի աւելի հաճոյական եւ ժողովորդեանս աւելի օգտակար գործ կ'ընես, քան թէ իմ առանձնութեանս ընկեր ըլլալով:

Սմբատ աս խօսքին չէր հաւաներ. կուզէր որ թագաւորն իրեն խօսք տայ որ զինքը քովէն չիհեռացընէր: Իսկ Տրդատ իր կարծեաց մէջ հաստատուն կենալով՝ մէջերնին սիրոյ ու բարեկամութեան վէճ մը սկսաւ: Աերջապէս թագաւորն ո՛չ հաւանիլ եւ ո՛չ ալ անոր սիրտը կոտրել ուզելով՝ Հիմա ճամբանիս յառաջ տանինք, ըսաւ, եւ երբ որ տեղերնիս կը հասնինք, ան ատեն կը տեսնենք: Տիրասէր պաշտօնեան ասոր վրայ ուրախանալով եւ յուսալով որ ետքը թագաւորին միտքը կրնայ փոխել, քաջալերուեցաւ, ուստի եւ ոտք ելան սկսան նորէն քալել:

Քիչ մը ետքը պզտիկ գեղ մը հասան. հոն Սմբատ երկու ձի գնեց, որոնց վրայ հեծնելով՝ ճամբանին յառաջ տարին: Թէպէտ ճամբորդութիւննին ըստ ինքեան շատ զուարճալի, անցած տեղերնին շատ աղուոր ու սխրալի էր. բայց իրենց գտնուած վիճակն ամենեւին բանի մը միտ դնելու, ամենեւին գեղեցկութեամբ մը զուարճանալու չէր ներեր: Ատորած սրտով ու տխուր դէմքով, միայն իրենց վշտին վրայ մտածելով եւ ան միայն զգալով՝ ճամբանին յառաջ կը տանէին:

Աս կերպով երկու շաբաթ ետքը Երիզա քաղաքն հասան: Գեռ Սմբատ չէր գիտեր թէ ո՛ւր պիտի կենան: Հոն ձիերնին ծախեցին եւ առանձնութեան մէջ հարկաւոր ըլլալու բաներ գնեցին: Երիզայէն սկսան նորէն գէպ ի արեւմուտք ոտքով քալել. երեք օր Եփրատայ ծաղկազարդ եղերքէն քալելէն ետքը՝ լերան մը ստորոտն հասան:

Ահա աս լեռն է, ըսաւ Տրդատ, իմ բնակութեանս տեղը. ահա մօտիկցանք ան տեղն՝ որուն

Անոր  
ողովոր-  
թէ իմ  
զէր որ  
չիհե-  
ատուն  
ան վէճ  
նիլ եւ  
ամբա-  
ղերնիս  
պաշ-  
տով որ  
սջալե-  
քալել:  
Հոն  
ճամ-  
իւննին  
շերնին  
նուած  
ենեւին  
: Աո-  
վշտին  
բանին  
ողաքն  
ի կե-  
թեան  
ողայէն  
ել. ե-  
ալելէն  
ակու-  
որուն

այնչափ կը փափաքէի, ահա այնչափ անգամ հար-  
ցուցած տեղդ՝ աս լեռն է:

Ամաց կամաց լերան վրայ ելան ու անտառի  
մը մէջ մտան, որուն ցանցառ ծառերը հազիւ թէ  
արեւուն ճառագայթները կրնային արգելել: Քիչ մը  
յառաջ երթալէն ետքը՝ առջեւնին պզտիկ դաշտ մը  
բացուեցաւ, որուն ճոթն էր Տրդատայ երազին մէջ  
տեսած այրը: Մեծ յարգութեամբ ան նուիրական  
տեղը մտան: Ահաւասիկ, ըսաւ թագաւորը, Մանեայ  
այրը. հոս ապրեցաւ մեր հասարակաց Հայրն եւ զիս  
ալ հոս հրաւիրեց. ես ալ կ'ուզեմ որ իմ վերջին  
բնակարանս՝ իմ հօրս վերջին բնակութեան տեղն  
ըլայ: Անոր լերկ ու տխուր պատերն իմ ապարանքիս  
զարդերէն աւելի կ'ընտրեմ. աս կոշտ ու կարծր գե-  
տինն իմ փափուկ ու պաստառալից անկողնէս աւելի  
հաճելի է ինձի, որովհետեւ գիտեմ որ իմ Հօրս  
անկողինն ալ աս էր: Սմբատ մեծ յարգութեամբ մը  
չորս կողմը կը նայէր. ամէն տեսած առարկաներն  
իրեն նուիրական կերեւային:

Քիչ մ'ալ ասդին անդին պտրտելէն ետքը՝  
Տրդատ ծանր ձայնով մը դարձաւ իրեն ըսաւ. Գի-  
տես որ աս խոր առանձնութեան մէջ քու ընկերու-  
թիւնդ ինձի որչափ քաղցր է. ես ալ շատ կը բաղ-  
ձայի որ մինչեւ ի մահ իրարմէ չբաժնուէինք: Բայց  
մէկալ կողմանէ քեզմէ զատուելու հարկաւորութիւ-  
նը տեսնելով՝ պէտք է որ աս բաղձանքս ալ զոհեմ:  
Հարկ է, սիրելի Սմբատս, աննահանջելի հարկ է որ  
դուն տեղդ դառնաս: Պէտք է որ իմ որդւոյս քովն  
երթաս, իրեն նեցուկ, օգնական, իր կենացը պահա-  
պան ու իր խորհրդատուն ըլլաս: Չէ, չէ, քու եր-  
թալդ հայրենեաց, ժողովրդեանս օգտակար է. չեմ  
կրնար աս օգտէն հայրենիքը, ժողովուրդս զրկել:  
Քեզմէ զատուիլս արդէն ինձի դառն է. ընդդիմա-  
նալովդ՝ աս բաժանումնիս աւելի մի դառնացրներ:

Սմբատ աս խօսքերուն վրայ շատ այլայլեցաւ . եւ թէպէտ մեծ դժուարութիւն կը կրէր ու կ'ուզէր ամէն կերպով ջանալ որ հոն թագաւորին քովը մնայ , սակայն զինքն աւելի շտրտմեցընելու համար գլուխ ծռելու ստիպուեցաւ : Աչքէն հեղեղի պէս արցունք սկսաւ վազել՝ տեսնելով որ Տրդատ ինչ աստիճանի սէր ու գութ ունի հայրենեաց ու ազգին . եւ այնպիսի թագաւորէ մը զըկուելնուն համար՝ սիրաբ կտոր կտոր կ'ըլլար : Միայն աղաչեց որ գոնէ նոյն գիշեր մէկտեղ անցընեն ու երկրորդ օրը բաժնուին , որն որ թագաւորն յանձն առաւ :

Բրած քաղցր բայց տրտմական խօսակցութիւննին լսուելու արժանի էր : Տրդատ դարձեալ այրած սրտով իր նախարարաց ապերախտութեան ու անկարգութեանց վրայ դանդաւատ ընելէն ետեւ՝ իրեն շատ խրատներ տուաւ՝ որ որդւոյն քովն եղած ատեն ի գործ դնէ : Միանգամայն ապսպրեց որ որդին մասնաւոր կերպով մը իր կողմանէ աստուածընտիր հայրապետին խնամոցն յանձնէ : Այսպէս գիշերուան մեծ մասը խօսակցելէն ետեւ՝ մնացած քանի մը ժամն ուզեցին քիչ մը հանգչիլ : Սմբատ առջի իրիկուրնէ թագաւորին համար խոտերով ու մամուռներով անկողին մը ձեւացուցած էր , որուն վրայ Տրդատայ յոգնած անդամները հանգչեցան : Ինքն ալ անկէ քիչ մը հեռու իր հանգիստն առաւ :

Արբ որ արեւը ծագեցաւ , երկուքն ալ արթընցան ելան ու քիչ մը վերջը Տրդատ բաժնուելու խօսքը նորէն բացաւ : Ասանկ խօսելով այրէն դուրս ելան : Ո՛վ կրնայ իրենց տրտմութիւնն ստորագրել , իրենց բաժնուելու ցաւն երեւակայել . ո՞ր մայր արդեօք ասկից աւելի դառն ցաւ զգացած է՝ իրեն սիրելի որդիէն զատուելու ատեն : Մահուան հաւասար կ'երեւար իրենց աս բաժանումը . բայց ինչ օգուտ , հայրենեաց սէրն ու օգուտն այնպէս կը պա-

Հանջեր : Լալով մէկ մէկու փաթթուեցան ու շարունակ առանց խօսք մ'ըսելու իրարու երես կը նայէին , կարծես թէ մէկզմէկ տեսնելէն յազիլ կ'ուզէին , իբրեւ ստոյգ սեպելով որ մինչեւ ցմահ ալ պիտի չտեսնուին :

Այրին դրան առջեւը ծնկի վրայ եկան ու քանի մը բոպէ անմուռնչ աղօթելէն ետքը՝ ոտք ելան : Թագաւորը քիչ մը տեղ Սմբատին յուղարկաւոր ուզեց երթալ . անձայն ու տխուր դէմքով քալելով՝ կամաց կամաց յառաջ կ'երթային : Լեռնէն վար իջնալու տեղն որ հասան՝ նորէն ցաւով իրարու փաթթուեցան ու սաստիկ կսկիծով պագտուելէն ետեւ՝ ակամայ բաժնուեցան : Տրդատ հազիւ՝ երթաս բարով , սիրելի որդիս , սիրելի ազգս քեզի կը յանձնեմ , կրցաւ ըսել . . . . եւ անհաստատ քայլով մը իրարու հակառակ ընթացքով յառաջ գացին : Թագաւորն իր պրը դարձաւ . Սմբատ ալ արտորնօք լեռնէն վար իջաւ : Արան խոր տրտմութիւն մը պատած էր . դէմքին այլայլութենէն ու շարժմունքներէն անմիջապէս կ'իմացուէր թէ մեծ կորուստ մ'ըրած էր :

լեցաւ .  
կ'ուզէր  
քովը  
համար  
լի պէս  
տ ինչ  
ու ազ-  
ն հա-  
ւեց որ  
որդ օրը  
թիւն-  
այրած  
ու ան-  
իրեն  
եղած  
ոեց որ  
ուած-  
էս գի-  
ծ քա-  
տ առ-  
ու մա-  
ն վրայ  
ինքն  
լ :  
րթըն-  
ուելու  
դուրս  
սգրել ,  
որ ար-  
իրեն  
հաւա-  
ն ինչ  
լ պա-

ՏՐԴԱՏԱՅ՝ իր կենաց վերջին օրերն անցընելու համար ընտրած առանձնութեան տեղը՝ գեղեցիկ տեղ մը չէր, մանաւանդ թէ սաստիկ ահուելի կերպարանք մ'ունէր: Բոլոր նոյն լերանց գօտին զարհուրելի ժայռերէ ու խորունկ վհերէ կազմուած էր. միայն այրին առջեւը քիչ մը շիտակ դաշտանման տեղ կար: Այրին ետեւի կողմը բարձր ու անմատոյց ժայռեր պատած էին, որոնցմէ քիչ մը հեռու կ'երեւար լերան բարձր կատարը ձիւներու տակ ծածկուած: Բուն Մանեայ կամ Լուսաւորչայ այրէն քիչ մը անդին ուրիշ քանի մը պզտիկ այրեր ալ կային, որոնք ժայռերու պատառուածներու մէջ փորուած էին: Բոլոր լեռն անապատ ու ամայի, ամէն կողմ անջրդի էր: Հոն ամենեւին ուրիշ ձայն չէր լսուեր, բայց եթէ անգղներու սուր ձայնը եւ կամ դառնաշունչ հովերուն՝ լերանց պատառուածներուն մէջէն անցնելով պատճառած տխուր հնչիւնը. եւ ոչ իսկ ջրոյ կամ վտակի կարկաջանք մը կը լսուէր, վասն զի աս լերան վրայ ջուր ալ քիչ կը գտնուէր. միայն այրէն հեռու դէպ ի վար յստակ ու ականակիտ աղբիւր մը



կար, որն որ կարծես թէ այրին մէջ բնակողին պիտոյքը ճարելու համար կը բխէր: Ամենեւին պտղատու ծառ մը չէր տեսնուեր. եղած վայրենի ծառերն ալ անանկ ցանցառ, անանկ լերկ էին, որ տեղւոյն զարդ ու վայելչութիւն մը չտալէն զատ՝ չորս կողմը տիրող տխրութիւնն ու ահաւորութիւնն աւելի կը սաստկացընէին: Հողն ու օդն ալ ընդհանրապէս մշակութեան անյարմար էր. միայն ասդին անդին քիչ մը տեղեր կը տեսնուէին, որոնք մշակուելով՝ մարդկային կենաց վերջին աստիճանի հարկաւոր եղածը կրնային մատակարարել. բայց սաստիկ խիստ աշխատութիւն հարկաւոր էր: Աերջապէս ասիկա անանկ լեռ մըն էր, որն որ կարծես թէ Հայաստանի գեղեցիկ ու սխրատեսիլ դիրքերուն եւ արգասաւոր ու շատաջուր երկիրներուն ընդդիմապատկեր մը ձեւացընելու համար՝ դիւթութեան մը միջոցով՝ հազարաւոր մղոններով հեռու տեղէ մը բերուած հոն դրուած էր: . . .

Թագաւորն իր հաւատարիմ սպասաւորէն բաժնուելէն ետեւ՝ քիչ մը ատեն այրին առջեւն իր ցաւոցը մէջ ընկղմած մնալէն վերջը՝ սիրտը քիչ մը սփոփելու համար չորս կողմն ուզեց պարտիլ: . . .

Բայց, ո՛հ, աս իր գտնուած տեղը, Սեպուհ լեռը՝ ինչպէս կրնար վիրաւորած սրտի մը մխիթարութիւն եւ սփոփանք տալ. մանաւանդ թէ ասոր հակառակ՝ միայն անոր տեսքը բաւական էր մարդս տխուր տրտմութեան մէջ ձգելու: Ժայռերուն սեւ գոյնը, լեռներուն մերկ տեսիլքն ու ամէն կողմ պատած խոր լուծիւնը՝ վրան մեծ տպաւորութիւն բրաւ: Բոլոր պարտած տեղերն անանկ կերպարանք մ'ունէին, որ կարծես թէ բնութեան անէծքն ընդունած ու անոր երեսէն թող տրուած երկիր մըն էր: Ամէն մէկ սեպ ու բարձր ժայռերն աչքին առջեւը մէյ մէկ զարհուրական տեսիլ մը կը նկարէր: Իր բնակութեան ամէն

ցընելու  
իկ տեղ  
լարանք  
լի ժայ-  
այրին  
կար:  
Ժայռեր  
ար լե-  
: Բուն  
անդին  
որոնք  
էին:  
անջրը-  
, բայց  
աշունչ  
ն անց-  
սկ ջրոյ  
ղի աս  
այրէն  
իւր մը

կողմը պտրտեցաւ ու միշտ զուարճալի դիրք մը գըտ-  
նելու մտքով՝ դիմացն ելած տխուր տեղերը թող  
կու տար ուրիշ կողմ կ'անցնէր, բայց միշտ աւելի  
սոսկալի տեսարաններու կը հանդիպէր: Աերջապէս  
աշխատութենէ յոգնած ու սիրտը տխրութեամբ  
լեցուած՝ դէպ ի այրը դարձաւ, դրան առջեւը նըս-  
տեցաւ. իր վիճակին դժուարութիւններուն ու ծան-  
րութիւններուն վրայ սկսաւ մտմտալ:

Չիկրնար խօսքով պատմուիլ առջի օրերն զգա-  
ցած անձկութիւններն ու կրած նեղութիւնները: Ա՛հ,  
առանձնութիւն, առանձնութիւն, կը կանչէր, չէի  
կարծեր որ այսչափ դառն ըլլաս: . . . Բոլոր կեանքը  
մարդկային ընկերութեանց մէջ անցընող մը՝ երկայն  
ատեն առանց մարդու երես տեսնելու՝ ինչպէս կրնար  
կենալ: Գոնէ, կ'ըսէր, երբեմն երբեմն գեղացի մը  
հանդիպէր, գէթ ըստ պատահման մէկն աս կողմերս  
գար, որ մարդու ձայն մը լսէի: . . . Բայց չէ. աս  
մխիթարութենէն ալ զըկուած եմ. անգղներու ձայ-  
նէն ուրիշ ձայն լսելէք չունիմ: . . . Ա՛հ, ինչ ա-  
մայի տեղեր, կը կանչէր ինք իրեն, ինչ ժայռեր,  
որոնք հազիւ դիշատիչ թռչուններու բոյն ըլլալու  
յարմար են. ես ալ մարդկան բնակութիւնը թող  
տալով՝ անոնց պէս իմ բնակութիւնս այրերու, ժայ-  
ռերու մէջ պիտի դնեմ եղեր: Աշխարհքիս մէկ  
ծայրը, մուցուած մէկդի նետուած պիտի մնամ  
եղեր: Աս ալ բաւական չէ, ծերութեանս վերջին  
օրերն, ամենէն տկար օրերս անօդնական պիտի մնամ,  
ու ամէն բան իմ ձեռքովս պիտի գործեմ եղեր:

Պարծես թէ աս իր խեղճ վիճակին ողորմելու-  
թիւնն աւելի եւս զգալ տալու համար բոլոր կենաց  
մէջ ունեցած վայելմունքներն, ընդունած պատիւ-  
ներն ու ըրած մեծամեծ գործքերը մէկիկ մէկիկ  
աչքին առջեւը կը նկարուէին: Ան Հռոմայեցւոց ար-  
քունեացը մէջ անցուցած ժամանակներն, ան ար-

քունական թագ ու պատիւ առնելով Հայաստան  
 դառնալն, ան բողոր երկրէն սիրով եւ ուրախութեամբ  
 ընդունուիլը, ան իր տէրութիւնը ծաղկեցընելու,  
 հպատակներն երջանիկ ընելու համար ըրած ջանքն  
 ու աշխատանքը՝ որն որ իրեն իբրեւ զբոսանք մըն  
 էր, ան քրիստոնէութեան դարձած ատեն ունեցած  
 մխիթարութիւնն եւ Հայաստան աշխարհին դարձին  
 վրայ զգացած ուրախութիւնը . . . . . այս ամե-  
 նայն եւ ուրիշ ասոնց նման հազար ու մէկ մտած-  
 մունք՝ որոնք ուրիշ անգամ մտքին մէջ եկած ատեն  
 սիրաբ քաղցրութեամբ եւ ուրախութեամբ կը լեցը-  
 նէին, հիմակ իր դառնութիւնն ու ցաւերը կը կըր-  
 կնապատկէին, որովհետեւ չէր կրնար անոնք մտածել՝  
 առանց իր հիմակուան դտնուած վիճակին հետ հա-  
 մեմատելու, որով եւ առանձնութեան վշտերն աւելի  
 եւս կը սաստկանար:

Այսպիսի խորհուրդներով տանջուած ատեն՝ քա-  
 նի քանի անգամ միտքը կու դար որ ձգէ արքու-  
 նիք դառնայ եւ կամ գոնէ աւելի քաղցր օգ ունե-  
 ցող եւ մարդկային բնակութեանց աւելի մօտ տեղ  
 մ'երթայ քաշուի. եւ հազիւ զինքն հոն հրաւիրո-  
 շին յիշատակաւն ու իր արիասիրտ բնութեամբը  
 կրնար դէմ կենալ եւ աս խորհուրդն իբրեւ իրեն  
 անարժան՝ մէկդի նետել:

Սոյն մտածութիւնները զինքը երկայն ատեն չար-  
 չարեցին. քանի որ գործքը կը լմըննար ու ինք զին-  
 քը մինակ կը տեսնէր, սիրաբ կը թոյլնար, հոգին  
 կը վհատէր: Բայց կամաց կամաց սկսաւ զօրանալ,  
 արիութիւնն իրեն օգնեց ու թող չտուաւ որ տրտ-  
 մութիւնը բոլորովին զինքն ընկճէ. ասանկ դէպքե-  
 րու մէջ մի միայն մխիթարուելու տեղն իր բնակա-  
 րանն էր. վրան տրտմութիւն մը դալուն պէս՝ շուտ  
 մը դէպ ի այրը կը վազէր, իր սիրելի հոգեւոր Հօրը  
 նստած տեղը կ'երթար եւ անոր առանձնութիւնն

ու ճգնութիւնները մտածելով՝ նորէն դժ ու հոգի կ'առնուր: Այնպէս կրօնը կենաց ամենէն դժուարին պարագաներուն մէջ՝ մարդուն միակ մխիթարութիւնը, միակ օգնութիւնը կ'ըլլայ:

Թագաւորին գլխաւոր զբաղմունքն իր փոքրիկ արտը գործելն եւ իր կենաց պահպանութեան համար հարկաւոր եղածները հասցրնելու ջանալն էր: Ան փոքրիկ արտը շատ անգամ իր արցունքովն ու քրտինքովը կ'ոռոգէր: Իր ծերութեան աշխատութիւնը նոյն կոշտ երկիրը կակղցուց, ամէն բան կարգի դրաւ. այնպէս որ քիչ մը ետքը հոնտեղը հասած կանանչեղէններն ու պտուղներն իր սակաւապէտ կենացը բաւական կ'ըլլային: Այրին առջեւի գետինն ալ մաքրեց, շտկեց. նոյնպէս անուշահամ աղբիւրին քով պզտիկ պարտէզ մը ձեւացուց ու խոտով եւ վայրենի ծաղիկներով զարդարեց:

Ամէն իրիկուն ան աղբիւրին գլուխը կերակրիկը կը պատրաստէր. հոն յոգնած անդամներն կրենց հանգիստը կ'առնուին. հոն իր կերակուրը կ'ուտէր եւ անուշ ջրով ծարաւն անցրնելով՝ երկայն ատեն նստած կը մտածէր ու ինք իրեն հոգի կու տար:

Ասանկով կամաց կամաց զգացած դժուարութիւնները փարատեցան. ալ իր առանձնակեաց վիճակն իրեն ծանր չէր երեւար. մանաւանդ թէ օր աւուր վրայ ներքին քաղցրութիւն մը, զուարճութիւն մը կը զգար: Իր աշխատութեամբը դարմանուած փոքրիկ արտն ու այրին քովերն իրեն բաւական զուարճալի տեսարան մը կը պարզեւէին: Շատ իրիկուններ ալ այրին դրան առջեւը դիզած չոր խոտերուն վրայ նստած, լուսնոյ գեղեցիկ լուսովն Աստուծոյ մեծութեան եւ բարութեան վրայ կը խորհէր: Տաք եղած գիշերները շատ անգամ աղբիւրին քովը՝ ծառի ճիւղերով ու տերեւներով շինած խուղին մէջ քնոյ հանգիստը կ'առնուր եւ արեւը չեւած՝ Աս-

տուճոյ փառք տալով կ'արթըննար, իր մշակական  
ու առանին գործքերուն կը զբաղէր:

Աս կերպով Տրդատ աս խաղաղ ու հանգարտ  
կենաց այնպէս սէր կապեց, որ մշակական աշխա-  
տութիւնն ու առանձնութիւնն ալ ամենեւին իրեն  
դժուարութիւն չէին տար: Մեծ փութով արտը կը  
գործէր, նոր ծառեր կը տնկէր, պղտիկ պարտիզին  
ջուր կու տար. վերջապէս գրեթէ բոլոր օրը գործե-  
լէն ետեւ՝ այրը կը մտնէր, աղօթքները կ'ընէր ու  
կերակրոյ կ'երթար. կերակրէն ետքը քիչ մը հանգ-  
չելէն ետեւ քուն կ'ըլլար: Աս կեանքն երթալով  
իրեն այն աստիճանի սիրելի եղաւ որ թագաւու-  
րութեան ատենն ունեցած դիւրութիւնները եւ ոչ  
միտքը կու գային, եւ եթէ գալու ալ ըլլային՝ աս  
քաղցր կենաց հետ ստուգիւ չէր փոխեր. ինք իրեն  
կը զարմանար թէ ինչո՞ւ առջի ատենները աս կեանքն  
իրեն այնչափ դժուար եկած էր: Ստոյգ է աս իր  
հանգստութեան ժամանակ երբեմն երբեմն իր նա-  
խարարաց անպիտանութիւնն ու սպերախտութիւնը  
միտքն իյնալով՝ զինքը քիչ մը կը վրդովէին ու սիր-  
տը կը վերաւորէին. բայց շուտ մը նոյն վշտերն Աս-  
տուճոյ նուիրելով, մանաւանդ թէ շնորհակալ կ'ըլ-  
լար որ անոնց առթովը հիմակուան երջանկութեան  
հասաւ:

Այսպէսով երկու ամիս մ'ալ անցաւ եւ ամե-  
նեւին իր խաղաղութիւնն ու հանգիստը վրդովելու  
առիթ մը չպատահեցաւ:

Ե.

Երեսէ ամիս էր որ Տրդատ Թագաւորական պատիւը ձգած, արքունիքէն ելած էր: Ամառուան տաք ու պայծառ օրերն անցած եւ աշնան զով մանաւանդ Թէ պաղ ու մշուշոտ օրերն հասած էին: Ծառերուն տերեւները կը սկսէին Թափիլ եւ ծաղիկներն ու խոտերը կամաց կամաց կը Թարչամէին ու կը չորնային: Աարժես Թէ բնութիւնն իր նոյն տեղերը ցուցուցած սակաւժամանակեան զուարթութեան վրայ զղջալով՝ կ'աճապարէր նորէն իր տխուր ու մթաղգած կերպարանքն առնուլ եւ պարզեւած նուազ ուրախութիւնը տասնապատիկ տրտմութեամբ փոխարինել:

Օր մը Տրդատ ուզեց լեռնէն քիչ մը դէպ ի վար իջնալ, նոյն կողմերը պտրտիլ: Այրէն խել մը հեռացած էր, մէյ մ'ալ հեռուէն մարդ մը տեսաւ որ դէպ իր կողմը կու գար: Աս դէպքը սիրտն անպատմելի ուրախութեամբ լեցուց, ինչու որ Սմբատէն բաժնուելէն ետեւ ամենեւին մարդու երես տեսած, մէկու մը հետ խօսած չունէր: Իսկզբան չէր կրնար աչքին հաւտալ, կարծէր Թէ իր այլայլած երեւակայութիւնը զինքը կը խաբէ: Բոպէ մը յառաջ ստոյգն

իմանալու համար՝ սկսաւ ընթացքը շուտցընել, սիրտն երկիւղի եւ յուսոյ մէջ բաժնուած էր. կ'ուզէր աճապարել որ շուտ մը ան իրեն ցանկալի տեսիլքը վայելէ. բայց մէկալ կողմանէ կը վախնար որ չըլլայ թէ խաբուած ըլլալն իմանալով՝ յոյսը շուտով կորսուի:

Քիչ մ'ալ աւելի մօտենալով՝ ալ տարակուսելու տեղ չմնաց. բացայայտ տեսաւ թէ ան հեռուէն նշմարածը ծերունի մըն էր, որ դէպ իրեն կը յառաջանար: Նոյն ատեն օտարականն ալ զինքը տեսնելով՝ աւելի շուտով սկսաւ քալել: Տրդատ սրտին մէջէն Աստուծոյ շնորհակալ ըլլալով՝ աւելի կը վազէր քան թէ կը քալէր. սակայն մտքին մէջ միշտ կասկածներ կը ծնանէին՝ թէ արդեօք եկողն ս'վ է եւ ինչ վախճանաւ կու գայ: Աւերջապէս երբ որ բաւական իրարու մօտիկցան, ճանչցաւ թէ իր հաւատարիմ Սմբատն է, որն որ նոյն ատեն զինքը ճանչցած ըլլալով՝ քայլերը կը զօրացընէր յառաջ կու գար: Գեռքովէ քով չեկած՝ նշաններով իրենց ներքին ուրախութիւնն յայտնեցին, եւ երբ որ աւելի մօտիկցան՝ այլայլած ձայնով մէկգմէկ բարեւեցին, վազելով եկան իրարու փաթթուեցան եւ արցունք թափելով՝ մխիթարուեցան:

Տրդատ անհամբերութեամբ մը Հայաստանի վիճակն հարցուց. իր որդւոյն լրերն առնուլ կ'ուզէր, իր հրաժարման՝ նախարարաց վրայ ըրած ազդեցութիւնն իմանալու կը փափաքէր: Սմբատ սաստիկ յոգնած ու այլայլած ըլլալով՝ լրերն զառ ի վայրին վրայ նստեցան եւ պաշտօնեան խօսքն այսպէս սկսաւ:

Մեծ ցաւով քեզմէ բաժնուելէս ետքը՝ եկած ճամբէս ետ դառնալով՝ նախ Երիզա հասայ, անկից ալ ձիով Աղարշապատ դացի: Նախարարները՝ հոն հասնելս իմանալնուն պէս՝ շփոթած վրաս թափեցան. քանի մը տեղէն լուր առինք որ, ըսին, թագաւորը քեզի հետ մէկտեղ պալատէն դուրս է ելեր. բայց

զատիւր  
ու  
աւանդ  
Երառե-  
լիկներն  
կը չոր-  
որ ցու-  
ն վրայ  
ազգած  
ուրա-  
սրինել:  
ի վար  
մը հե-  
սաւ որ  
նպատ-  
ն բաժ-  
ծ, մէ-  
կրնար  
երեւա-  
ստոյզն

Մինչեւ հիմա թէ զինքը թէ զքեզ գտնելու համար  
ըրած ճիգերնիս պարապ ելաւ: Արդ՝ ըսէ, ո՞ւր է, ո՞ւր  
զնաց եւ ինչո՞ւ գնաց:

Ի՞նչ պատասխան կրնայի տալ. սրտի խռովու-  
թիւնս կրցածիս չափ ծածկելով, խօսքերս մեղմելու  
ջանալով եւ առանց զիրենք նախատելու՝ իմացուցի  
որ դուն իրենց անկարգութեանց ու շար ընթաց-  
քին պատճառաւ զիրենք թող տուած, թագէն ու  
գահէն հրաժարած՝ կ'ուզես առանձնութեան մէջ  
կեանքդ անցընել:

Քիչ մը ատեն լուռ կենալէն ետեւ՝ ըսին. Արդէն  
մենք աս բանս մակարերելով եւ գիտնալով որ ան-  
գամ մը մտքին մէջ դրածէն ալ ետ չիդառնար, ար-  
քայորդին մեզի թագաւորեցընել ուզեցինք: Բայց  
ի՞նչ օգուտ, խոսքով ամենեւին չ'ուզեր թագաւորու-  
թիւնն յանձն առնուլ, որպէս զի թագաւորը նորէն  
դառնայ:

Ասոր վրայ՝ քու զգացած ցաւերդ ու կրած վըշ-  
տերդ ստորագրեցի, եւ ուրախութեամբ տեսայ որ  
խօսքերս շատերուն վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէին:  
Իրենցմէ բաժնուելէս ետեւ՝ արքայորդւոյն հետ մի-  
նակ տեսնուիլ ուզեցի. Ո՛հ, ի՞նչ մեծ արտմութեան  
մէջ ընկղմած է խոսքով, եւ ցաւերն ի՞նչչափ սաստ-  
կացաւ երբոր բարեւոյ իրեն տուի եւ կամքդ յայտնեցի:

Հոս Տրդատայ աչուրները լեցուեցան ու հառա-  
չելով մը՝ կեցիր քիչ մը, կեցիր, ըսաւ. ձեռքովն  
երեսը գոցեց կեցաւ: Քիչ մը ետքը նորէն դարձաւ  
ըսաւ Սմբատին. Ուրեմն խոսքով չ'ուզեր թագաւորել:

Չէ, ըսաւ Սմբատ, ինք կը ջանայ որ դուն դառ-  
նաս, եւ ասոր համար ալ նախարարները կը յորդո-  
րէ որ դան թողութիւն ուզեն եւ նորէն աթոռդ  
դարձընեն, որով ամենուն արտմութիւնն ուրախու-  
թեան փոխուի: Արդէն նախարարներն իրենք իրենց-  
մէ ալ աս բանիս կը բաղձան, որովհետեւ ժողովուրդն



Համար  
 է, որ  
 ուսվու-  
 նեղմեղու  
 հացուցի  
 նթաց-  
 գէն ու  
 ն մէջ  
 Արդէն  
 որ ան-  
 ր, ար-  
 Բայց  
 ուրու-  
 նորէն  
 ձ վըշ-  
 սայ որ  
 ընէին:  
 ետ մի-  
 թեան  
 սաստ-  
 ցանցի:  
 Հառա-  
 եռքովն  
 դարձաւ  
 աւորել:  
 ի դառ-  
 յորդո-  
 աթող  
 րախու-  
 իրենց-  
 սվուրդն

իմացած ըլլալով որ քու ձգել երթալուդ պատճառն  
 իրենք են, իրենց գէշ աչքով կը նայի: Ա՛հ, տէր  
 իմ արքայ, լսէ սիրելի որդւոյդ ձայնին, մի մերժեր  
 բոլոր ժողովրդեանդ խնդիրքը: Եթէ նախարարները  
 գան զքեզ հրաւիրեն, գէ՛մ մի գներ: Ես ալ գըլ-  
 խաւորաբար անոր համար եկած եմ, որ աս ուրա-  
 խալի լուրը բերեմ թէ նախարարները թողութիւն  
 խնդրելու պիտի գան: Յուսամ որ ըրածներնուն վրայ  
 զղջացած ըլլան, եւ եթէ որ իրենց խնդիրքն ընդու-  
 նելով՝ հետերնին մէկտեղ աթող դառնաս, ալ  
 բոլորովին ուրիշ կերպով կը վարուին:

Յիսուն տարիէն աւելի, ըսաւ Տրդատ ծանրու-  
 թեամբ մը, Հայաստան կառավարեցի: Արնամ ըսել  
 որ առջի քանի մը տարիէն ետեւ՝ երբէք հանգիստ  
 ժամանակ չեմ տեսած: Գրոսի թշնամիներէն աւելի՝  
 նախարարացս անմիաբանութենէն ու անկարգութե-  
 նէն վիշտ ու նեղութիւն կրած եմ: Եթէ մինչեւ  
 հիմա փորձն առած չըլլայի, գուցէ կրնայի խօսքե-  
 րուդ հառանիլ. բայց արդէն դուն ալ գիտես թէ  
 ինչպէս կամակոր ու հպարտ նախարարներ կան, ու-  
 բոնք ամէն բարի խորհուրդներու գէ՛մ կը գներն,  
 միայն անոր համար՝ որ ան խորհուրդները տուողն ի-  
 րենք չեն. իսկ եթէ իրենք բան մը մտածեն եւ  
 հառանութիւն չգտնեն, աշխարհք տակն ու վրայ  
 կ'ընեն, որպէս զի իրենց ըսածն յառաջ երթայ:  
 Թող, սիրելիս, թող. ալ ես ծեր եմ, իմ վերջին  
 օրերս կ'ուզեմ որ Հողեւոր հօրս վերջին օրերուն  
 նման կեանք անցընեմ:

Ես խօսքերը խիստ մեծ տրամութեամբ եւ ներ-  
 քին այլայլութեան նշաններով ըսելէն ետքը՝ Սմբա-  
 տին հարցուց թէ արդեօք Սուրբ Հայրապետին հետ  
 տեսնուեցաւ:

Ատղարշապատ հասնելէս օր մը ետքը, պատաս-  
 խանեց Սմբատ, բոլոր քաղքին մէջ իմ ետ դառ-

նալուս լուրը տարածուելով՝ շատերն իրենց ցաւը  
յայտնելու եկան . ոմանք ալ զիս մեղադրեցին թէ  
ինչո՛ւ քու հրաժարելու կամքդ ուրիշներուն չիմացու-  
ցի, որ կարելի է թէ կ'արգելէին: Ասոնց պատաս-  
խան տալու ժամանակս՝ պատգամաւոր մ'եկաւ ու  
զիս Հայրապետին հրաւիրեց: Անմիջապէս ոտք ելայ  
հետը գացի: Երբ որ իր խուցը մտայ՝ մէկէն իր մե-  
ծարոյ երեսին վրայ խոր տրտմութեան նշաններ տե-  
սայ . աչուքները դեռ քիչ մը յառաջ թափած ար-  
ցունքէն կարմրցած էին: Տխուր դէմքով ու հառա-  
չանքով մը՝ Ո՛ւր է թագաւորնիս, ո՛ւր տարիր, ըսաւ:

Աս առանց ձայն հանելու՝ յառաջ գացի եւ անոր  
պատշաճաւոր յարգութիւնս ընելէն ետեւ՝ ասանկ  
խօսեցայ: Աստուածապատիւ տէր . թագաւորը շատ  
կը բաղձար որ հոսկից չբաժնուած՝ վերջին հրաժա-  
րական բարեւը տայ ձեզի եւ աստուածային օրհնու-  
թիւննիդ ընդունի . բայց թէ այլայլութենէն եւ թէ  
իմացուելու վախէն՝ արտորաց ու ժամ մը յառաջ  
քաղքէն դուրս ելլել ուզեց: Արդէն իր փախստեան  
պատճառներն ալ աղէկ գիտէք . գիտէք թէ ինչպէս  
սիրտը դառնացուցած են . . . :

Մէկէն խօսքս կտրելով՝ Գիտեմ, ըսաւ . բայց մի-  
թէ քիչ դժուարութիւն է հիմայ ինձի՝ նախարարաց  
անաստութեան յաղթել . գոնէ երկուքնիս մէկտեղ  
աւելի զօրաւոր միջոցներ կրնայինք գտնել, որով  
հայրենեաց օգտին փնաս չէր հասներ:

Արքայն, ըսի, բացարձակապէս միտքը դրած է  
որ ետ չդառնայ ու Մանեայ այրը քաշուած է: Ա-  
նոր համար ինձի յանձնեց որ ձեր միջնորդութեամբն  
արքայորդին թագաւորեցընենք եւ զանիկայ ձեր խնա-  
մոցը կը յանձնէ:

— Բայց ես կը լսեմ թէ նախարարներէն շա-  
տերը կ'ուզեն վերջին փորձ մ'ալ փորձել, կ'ուզեն  
երթալ թագաւորին աղաչել որ նորէն իր աթոռը

դառնայ : Ես ալ նոյն կարծեաց վրայ եմ : Եթէ յանձն չ'առնէր , ան ատեն կը մտածենք : . . . Ստոյգ է որ նախարարներէն ոմանք ինծի հետ միանալով արքայորդւոյն քովը ժողված են եւ հաւատարիմ կը մնան . բայց ասոր հակառակ մէջերնէն ոմանք ալ քանի որ մինակ մնացին՝ ամէն շարիք անպատիժ կը գործեն : Թագաւորին հեռանալն իրենց խրատ ըլլալու տեղ՝ աւելի եւս յանդգնութեամբ շարիք գործելու պատճառ եղած է : . . .

Հոս Տրդատ Սմբատայ խօսքը կտրեց . Տես ուրեմն , ըսաւ , տես թէ ինչ յոյս կրնամ ունենալ ետ դառնալէն : Եթէ խելքերնին գլուխնին եկած ըլլար , գուցէ կրնայի զիջանիլ . բայց քանի որ իրենք նոյնն են , ես ալ իմ կարծիքս չեմ փոխեր : Եթէ ինծի գալու աղաչելու ըլլան , աս միայն կ'ըսեմ որ նախ երթան իրենք փոխուին ու ետքը զիս յորդորեն :

Աս ըսելով ոտք ելան եւ սկսան զէպ ի Թագաւորին բնակարանն երթալ : Երբ որ Սմբատ այրն ու անոր քովերը տեսաւ , ապշեցաւ մնաց . կարծես թէ ամէն բան կերպարանափոխ եղած , առջին անգամ տեսածին նայելով՝ զուարթ կերպարանք մը ստացած էր : Տրդատ հաճութեամբ եւ ուրախութեամբ մը մէկիկ մէկիկ ամէն կողմ իրեն ցուցնելով՝ Հիմակ ես իմ հանգիստս դտած եմ , բարեկամ , ըսաւ . թող տան զիս որ նոյնը խաղաղութեամբ վայելեմ : Ամէն կողմանէ աղէկ ու օգտակար է որ որդիս գահն ելլէ : . . .

Նոյն իսկ անոր ինչ զէպ քով Թագաւորեն յիշելով՝ ամէնքը կը յորդորուին լաւագոյն ընթացք մը բռնելու : Միանգամայն որդիս զիրենք աւելի աղէկ կրնայ զսպել քան թէ ես՝ որ ծերացեր եմ :



ելաւ եւ տեսնելով որ Սմբատ հոն չէ, կարծելով  
[Թէ իրմէ յառաջ ելած դուրս գացած է, ինք հոն  
աղօթքն ընելէն ետեւ՝ դուրս ելաւ, ասդին անդին  
կը փնտռէր ու անուներ կը կանչէր. բայց տեղ մը  
չգտնելով՝ սկսաւ տարակուսիլ եւ տրտմիլ: Գեռ  
յոյս ունենալով որ գուցէ քիչ մը հեռու դացած  
ըլլայ, ամէն կողմ պտըտեցաւ. ճամբան աչքը շորս  
գին էր, [Թէ արդեօք Սմբատ որ կողմէն դուրս  
պիտ'որ ելէ: Աւերջապէս տեսնելով որ ակնկա-  
լութիւնը պարապ ելաւ, խռովեցաւ եւ սկսաւ ար-  
ցունք [Թափել: Չէր կրնար իմանալ [Թէ ինչ պատ-  
ճառաւ հեռացած էր. ե[Թէ ետ դառնալ ուղէր,  
կ'ըսէր ինք իրեն, անտարակոյս վերջին ողջոյն մը կու-  
տար. գուցէ, կ'ըսէր, զինքը վշտացընելու առիթ  
մը տուի: Չանազան կասկածներ ու խորհուրդներ  
միտքը կու գային. եւ յագեցուցիչ պատճառ մը  
չկրնալով գտնել, աստիկ տրտմութեան մէջ ինկաւ:  
Ուղեց որ քիչ մը սփոփելու եւ խորհուրդները ցրուե-  
լու համար արտն երթայ գործէ, բայց անկարելի ե-  
ղաւ. բազուկներուն վրայ ոյժ չէր մնացեր. ամէն տե-  
սած առարկաները զՍմբատ միտքը կը ձգէին ու սիր-  
տը կը վհատեցընէին:

Ամէն բան [Թող տալով՝ այրը քաշուեցաւ. զա-  
նազան մտատանջ խորհուրդներէ չարչարուելով՝ մին-  
չեւ կէսօրէն ետեւ այրին մէկ անկիւնը քաշուած  
խոր տրտմութեան մէջ նստած էր: Մէյ մ'ալ սկսաւ  
հեռուէն խառն ու անսովոր շշուկ ու ձայներ մը  
լսուիլ: Քանի գնաց շշուկը մօտիկցաւ, մինչեւ իրեն  
ճանօթ ձայներ ականջն հասան, եւ վերջապէս քանի  
մը նախարարաց ձայնն որոշ լսեց: Սիրտը [Թնդաց.  
Իմացաւ որ զինքը փնտռելու համար եկած են, կ'ու-  
ղէր անկից հեռանալ, բայց ինչ օգուտ, ճար չկար:  
Անոր համար նոյն տեղն անշարժ մնաց, եւ սկսաւ  
մտածել [Թէ անշուշտ Սմբատ անոնց գալու օրն յա-

աջուրնէ գիտնալով՝ գաղտուկ առջեւնին ելած է  
եւ անոնց հետ մէկտեղ կու գայ: Աս մտածմանց  
վրայ քիչ մը հոգի առաւ, որովհետեւ Սմբատայ  
հաւատարմութեան վրայ ամէն կողմանէ բոլորովին  
վտաս հր:

Ասոնք մտածելու ատեն նախարարները ներս մտան  
եւ զինքն ան աղքատին վիճակին մէջ տեսնելով՝  
պաղտեցան մնացին: Բերաննին գոց, երեսնին կախած,  
աջուրնին գետինը սեւեռած՝ անշարժ կը կենային,  
մէջերնէն ամենեւին մէկն առաջին խօսողն ըլլալու  
չէր համարձակեր:

Տրդատ քիչ մ'ատեն զանոնք իրենց շփոթու-  
թեան ու ամօթոյն մէջ թող տալէն ետեւ՝ հարցուց  
թէ Ի՞նչ կ'ուզէք: Բայց նախարարաց բերանը կըղ-  
պուած էր, չկրցան պատասխան տալ: Նորէն հար-  
ցուց թէ Ո՞ւր է Սմբատ: Մէջերնէն մէկը՝ Չենք գի-  
տեր, ըսաւ, քանի մը շաբաթ կայ որ զինքը տեսած  
չունինք: Հոս թագաւորին կասկածները նորէն սկսան:  
Վ'երեւայ որ մէջերնին չէ, կ'ըսէր. հապա ո՞ւր կրնայ  
ըլլալ, կը մտմտար ինք իրեն: Նախարարները տա-  
կաւին խորունկ լուութեամբ՝ յանցաւորի պէս առ-  
ջեւը կեցած էին:

Թագաւորն առանց անոնց խօսելուն սպասելու՝  
Ինչո՞ւ, ըսաւ, փուճ տեղ ծեր թագաւորնիդ փրն-  
տուելու ելեր էք. գացէք հիմակ ուղածներնուդ պէս  
ձեր անօրէն խորհուրդները կատարեցէք. ահաւասիկ  
ան շատոնցուրնէ բաղձացած ազատութիւննիդ գտած  
էք: . . . . Բայց եթէ չէ՝ զղջացած էք եւ ասկից ետ-  
քը կռապաշտութեան սովորութիւններէ հեռու եւ  
հայրենեաց հաւատարիմ մնալ կ'ուզէք, ահա խոսքով  
իմ որդիս, անոր քովը ժողովեցէք. եւ եթէ հայ-  
րենեաց օգտին կը փափաքիք, միամտութեամբ ու  
հաւատարմութեամբ անոր ծառայեցէք, որ չըլլայ  
թէ ձեր ներքին բաժանման պատճառաւ ինձի պէս

զինքն ալ թող տալու առանձնանալու ստիպէք,  
չըլլայ թէ օտար տէրութեանց ձեռքն իյնաք, հայրե-  
նիքը գերութեան մէջ ձգէք:

Մերեւայ որ աս խօսքերուն սրտերնին շատ նեղա-  
ցաւ. ինչու որ մէջերնէն մէկը բարկանալով ու այլայ-  
լաճ դէմքով մը դարձաւ իր ընկերներուն նշան մ'ը-  
րաւ ու դուրս ելաւ. մէկալներն ալ մէկիկ մէկիկ  
լուծեամբ անոր ետեւէն գացին. այնպէս որ ար-  
քային քով մարդ չմնաց: Գուրսը քիչ մ'ատեն  
մէջերնին խօսելէն ետեւ՝ ոմանք նորէն ներս մտան եւ  
սկսան աղաչել ու պաղատիլ որ իր աթոռը դառ-  
նայ, խոստանալով որ իրեն հաւատարիմ ու հնազանդ  
կ'ըլլան:

Տրդատ քիչ մը մտածելէն ետքը՝ պատասխան  
տուաւ թէ Այսչափ տարի փորձն առնելէն ու ձեր  
խոստմունքներէն խաբուելէն ետեւ՝ ձեր հիմակուան  
խօսքին դիւրաւ չեմ կրնար հաւտալ: Բայց եթէ  
զրուցածնիդ անկեղծ է նէ, ըսաւ, ձեզի աս միջին  
ճամբան կ'առաջարկեմ: Արդիս Խոսրովն իմ տեղս  
փոխանորդ կը դնեմ, թող անիկայ հիմակու հիմայ  
Հայաստան կ'առաջարկէ. եթէ տարի մը խաղաղու-  
թեամբ ու ձեր պարտքերը կատարելով տէրութեան  
կը ծառայէք, ան ատեն խնդիրքնիդ կրնամ ընդու-  
նիլ, ան ատեն եթէ կ'ուզէք որ ես նորէն աթոռս  
դառնամ՝ պատրաստ եմ, կը դառնամ: Իսկ եթէ  
Խոսրովին վրայ գոհ ըլլալով՝ կ'ուզէք որ միշտ մնայ,  
ալ աղէկ է: Թող տուէք որ ես աշխարհքիս աղ-  
մուկներէն հեռու գտած հանգիստս վայելեմ. ալ  
աշխարհք ինձի համար չէ. արդէն մարմինս՝ ինչպէս  
կը տեսնէք, հիւժած ու հող դառնալու մօտիկցեր  
է, թող տուէք որ ինք իրեն լուծուի երթայ. թա-  
գաւորութեան հոգերով իմ մահս մ'արտորցընէք:  
Արդեակք իմ, ես ամենուդ ալ սիրով թողութիւն  
կու տամ եւ կը խնդրեմ որ իմ որդւոյս նեցուկ ը-

լաք . որպէս զի ես ալ գոնէ իմ վերջին օրերս հայ-  
րենեաց ուրախալի լրերովը մխիթարուիմ ու հան-  
դարտ ողւով եւ գոհ սրտիւ գերեզման մտնեմ :  
Քացէք եւ որդւոյս ալ ողջոյնս ու հայրական օր-  
հնութիւնս տարէք :

Թագաւորին աս սրտաշարժ խօսքերէն՝ որոնք վայ-  
րենի գազաններն ալ գթութեան շարժելու բաւա-  
կան էին , նախարարներն ամենեւին չշարժեցան , մա-  
նաւանդ թէ աւելի եւս նեղացան : Իրենք շատերուն  
խօսք տուած էին որ անշուշտ զՏրդատ ետ կը դար-  
ձնեն : Հիմայ յոյսերնին պարապ ելլելով՝ իրենց պա-  
տուոյն ամօթ ու նախատինք մը կը սեպէին : Նորէն  
դուրս ելան , սկսան մտածել . վերջապէս որոշեցին որ  
աս եղած նախատանաց վրէժն առնուն , որովհետեւ  
Տրդատայ հոնտեղը մինակ քաշուած ապրիլն իրենց  
համար յաւիտենական նախատինք ու անարգանք  
մըն էր :

Մէջերնէն մէկը՝ որ շարութեան մէջ ամենէն աւելի  
էր եւ շատ անգամ իր անկարգութեանցը համար  
թագաւորէն յանդիմանուած ըլլալով՝ զանիկայ խիստ  
կ'ատէր , իր անձնական վրէժն ալ առնելու մտքով՝  
ինք զինքն առաջարկեց որ աս նախատանաց հատու-  
ցումն ինք պահանջէ : Աս անօրէն առաջարկութեան  
թէպէտ ոմանք իսկզբան սաստիկ ընդդիմացան ,  
բայց վերջապէս հաւանեցան եւ ամէնքը մէկտեղ՝  
առանց նորէն Տրդատայ հետ տեսնուելու՝ սկսան ետ  
դառնալ :

Իսկ ան տիրամասնիչ անօրէնն իր կապարճակիրը  
հետն առած՝ նորէն այրը մտաւ եւ թագաւորին առ-  
ջէն երթալով՝ Նախարարներն ետ դարձան , ըսաւ :  
Իրենք հաստատուն ակնկալութեամբ եկած էին որ  
զքեզ մեր տէրն հետերնին տանին : Աս բախտէն  
զրկուելուն վրայ շատ տրտմելով ու վշտանալով՝  
չկրցան մէյ մ'ալ անձամբ գալ հրաժարական ող-



Ղոյննին տալ եւ ինծի յանձնեցին որ իրենց սրտին  
ցուն յայտնեմ :

Ասոր Տրդատ ամենեւին ձայն չհանեց :

Նախարարը նորէն կրկնեց : Թէպէտ դրած պայ-  
մանդ դժուար է, բայց կը յուսամ որ սիրով կը կա-  
տարեն եւ զքեզ ալ գոհ կ'ընեն, որովհետեւ ետ  
դառնալու ատեննին մտքերնին արքայորդին աթոռ  
նստեցընել էր : Առ այժմ իբրեւ սիրոյ նուէր մը աս  
չնչին ընծաներն ամենուս կողմանէ ընդունէ եւ օրհ-  
նութիւնդ բոլոր Հայաստանին ու մեր վրայէն պակաս  
մ'ըներ :

Տրդատ աս խօսքերուն շատ ուրախացաւ, կարծե-  
լով որ իր առաջարկութիւնն ընդունելի եղաւ : Նո-  
րէն ուրիշ խրատներ տուաւ եւ զինքն յորդորելով  
որ ընկերներուն հետ մէկտեղ հեթանոսական սովո-  
րութիւնները թող տայ ու Խոսրովին հաւատարմու-  
թեամբ ծառայէ՝ սիրով զինքը խրկեց : Նախա-  
րարն իր կապարճակրին հետ այրէն դուրս ելաւ եւ  
արտորալով մէկալ նախարարաց ետեւէն հասնելու  
կը ջանար :

Իւրած ընծանին զանազան պտուղներ ու կերա-  
կուրներ էին, ամանով մ'ալ ընտիր զինի. նոյնպէս  
հովէն ու ցրտէն պատսպարելու համար հագուստներ :  
Տրդատ նախարարաց աս սիրոյ ցոյց քէն խիստ շար-  
ժեցաւ : Սիրտը սաստիկ տրտմութեան եւ ուրախու-  
թեան զգածմանց մէջ կը ծփար. ստոյգ է առջի  
ունեցած յարաբերութիւնները նորէն միտքը գալով՝  
կը խռովէր. բայց միանգամայն կ'ուրախանար որ իր  
առաջադրութեան մէջ անշարժ ու հաստատուն մնաց  
եւ անոնց շուտով երթալով՝ նորէն իր առջի հան-  
դարտութեանը կրնար դառնալ : Ամենէն աւելի  
զինքը հոգերու եւ մտածմանց մէջ ձգողը՝ Սմբատայ  
մէկէն աներեւոյթ ըլլալն էր. աս մտածմունքը յա-  
ռաջուրնէ աւելի զինք նեղելու սկսաւ. զանազան

կասկածներու կ'երթար, այլ եւ այլ խորհուրդներու մէջ կը տանջուէր:

Արդէն իրիկունը մօտեցած էր եւ Տրդատ դեռ բերանը բան մը չէր դրած, անոր համար քիչ մը ետքը՝ նախարարաց բերած ընծաներէն կտոր մը բան ուզեց ուտել, գինիէն ալ խմեց: Արդէն յայտնի է որ ասանկ այլայլութեան մէջ ամենեւին բան մը իրեն ախորժելի չէր կրնար դալ, ուստի եւ հազիւ քանի մը պատառ կըրցաւ բերանը դնել. շուտ մը դադարեցաւ եւ այրէն դուրս ելաւ: Բայց կէս ժամ մը՝ շարունակ Սմբատայ հեռանալուն վրայ խորունկ մտածելով պտրտելէն ետեւ՝ մէյ մ'ալ վրան անսովոր թմրութիւն մ'եկաւ: Գուցէ շատոնց չճաշակած գինիէս պատճառած է, ըսելով՝ այրը դարձաւ ու իրեն անկողնոյ տեղ ծառայող խոտերուն վրայ ընկողմանեցաւ:

ողներու  
 ա գեռ  
 քիչ մը  
 մը բան  
 յտնի է  
 մը իրեն  
 քանի  
 շաղրե-  
 մը՝ շա-  
 մտա-  
 սնսովոր  
 ած գի-  
 ու ի-  
 այ ըն-

# Է

**ՍՄԲԱՏ** քանի մ'անգամ հարցուցած եւ իմացած  
 ըլլալով որ Տրդատ իր առանձնանալէն ետեւ ամե-  
 նեւին միս կերած չէ, ուղեց անոր յանկարծական  
 ուրախութիւն մը պատճառել, ուստի եւ հարկաւոր  
 եղածներն առջի իրիկուրնէ պատրաստելով՝ առ-  
 տուանց կանուխ աղեղն առած Տրդատէն զաղտուկ  
 ճամբայ ելաւ: Լերան արեւմտեան կողմէն վար իջաւ,  
 սկսաւ գէպ ի վտակ մը յառաջ երթալ. վտակին ե-  
 ղերքն եղած անտառակը մտաւ, ամէն կողմ սկսաւ  
 պտըտիլ, բայց որսի մը չպատահեցաւ: Նոյն կողմե-  
 ըր քիչ մը գեղեցիկ տեսք ունենալուն՝ նստեցաւ  
 յողնութիւն առաւ: Ախօրուան մօտ նորէն ոտք  
 ելաւ եւ աւելի յառաջ գնաց. ամէն տեղ խո-  
 րին լուութիւն էր, հազիւ երբեմն քանի մը թռչուն  
 կ'երեւար: Ան տեղերն ալ պտըտելով ու դարձեալ  
 որսի մը չպատահելով՝ մեծ աշխատութեամբ լերան  
 ստորոտէն դարձաւ ու գէպ ի արեւելեան դին եկաւ,  
 ուսկից որ Մանեայ այրն երթալու ճամբան էր:

Նոյն տեղերն ալ երկայն ատեն պտըտելէն ետեւ՝  
 վերջապէս փոքրիկ եղջերու մը տեսաւ, ետեւէն վա-

զեց ու նետովը զարկաւ պառկըցուց : Ուրախութեամբ վրայ հասաւ ու մեռցընելէն ետեւ քովը նստեցաւ յողմութիւն առաւ : Մտքէն կ'ըսէր թէ Վաղը կրնամ խորվել ու տիրոջս ախորժական կերակուր մը պատրաստել : Ասանկ մտածմունքներով ինք իրեն կը զուարճանար ու կը սփոփուէր, որ թագաւորին հաճելի ծառայութիւն մը պիտ'որ ընէ :

Կէսօրէն ետեւ զարկած որսը կունակն առած՝ սկսաւ ետ դառնալ : Մէյ մ'ալ հեռուէն երկու հոգի տեսաւ՝ որոնք արտօրնօք լեռնէն վար իջած իր կողմը կու գային : Աչքն ետեւը հեռուները տանելով՝ տեսաւ որ խումբ մը մարդիկ ալ հեռուն գաշտին վրայ նստեր են : Անմիջապէս իմացաւ թէ Տըրդատին քովէն ետ դարձեր են. սիրտը թնդաց սկսաւ բոլոր մարմինը դողալ . չէր գիտեր թէ արդեօք թագաւորն անոնց խնդիրքին զիջած էր, թէ չէ : Քանի գնաց ան երկու հոգին մօտիկցան : Սմբատ տեսնելով որ նախարար մըն է իր կապարճակըովը, շուտ մը քովի անտառին թփերուն մէջ պահուրտեցաւ, որ չըլլայ թէ իրեն հոն ըլլալն իմացուի : Թփերուն մէջէն զանոնք շարունակ կը զննէր : Նախարարն ու կապարճակիրն աւելի մօտիկցան . այնպէս որ իրենց դէմքն որոշ սկսաւ տեսնել : Երկուքն ալ սաստիկ այլայլած էին, գոյներնին նետած, վրանին մեծ տրամութիւն մը կը տեսնուէր : Անհաստատ ընթացքնին եւ ըրած շարժումնին կը ցուցընէր թէ մեծ խռովութեան մը մէջ էին : Սմբատ աւելի եւս զգուշութիւն ըրաւ, մինչեւ որ անցան գացին : Բայց ինք բոլորովին տակն ու վրայ եղած էր . Ո՛հ, կ'ըսէր, արդեօք ինչ պատահած է, որ ասոնք այսչափ այլայլած են : Չանազան տխուր մտածմունքներէ ետեւ՝ սկսաւ ինք իրեն դէմ զայրանալ, թէ ինչո՞ւ թագաւորին քովէն բաժնուեցայ . այսպիսի առթի մէջ իմ ներկայութիւնս իրեն անշուշտ հարկաւոր էր, կ'ըսէր : Աս

մտածմունքներն այնչափ զինքը խռովեցին որ օտուր-  
ները կապուեցաւ, կեցած տեղն անշարժ մնաց: Հա-  
զիւ քիչ մը ետքը ինք իրեն գալով՝ անտառէն դուրս  
ելաւ, քարի մը վրայ նստեցաւ ու ձեռքը գլխուն  
կռթընցուցած երկայն ատեն մնաց:

Ալ իրիկուն ըլլալու մօտիկցած էր: Ո՛ր գիտէ,  
կ'ըսէր, Տրդատ ի՞նչպէս զիս կը փնտռէ, ո՛ր գիտէ  
ի՞նչ խօսուած է մէջերնին: . . . Ո՛վ գիտէ, արդեօք  
. . . : Հոս մտքին մէջ սարսափելի կասկած մ'իսկաւ,  
զորն որ շուտ մը իբրեւ չըլլալու բան մէկդի ընել  
կ'ուզէր. բայց անկարելի եղաւ. ուստի չկրնալով կե-  
նալ՝ մէկէն վեր ցատքեց ու եղջերուն հոն թող տա-  
լով՝ դէպ ի այրը ճամբայ ելաւ: Այնչափ հեռա-  
ցեր էր այրէն՝ որ հազիւ երեք ժամու մէջ կրնար հոն  
հասնիլ: Արեւը մտնելու մօտ՝ ինք ճամբայ ելաւ: Ըն-  
թացքին շուտութիւնը զարմանալի էր. զանազան  
կասկածներէ խռոված ըլլալով՝ կը ջանար որ բոլոր  
մը յառաջ հասնի: Բայց երկայն ատեն չկրցաւ նոյն  
ընթացքով յառաջ երթալ: Արդէն բոլոր օրը յոգ-  
նած էր, հիմակ ալ սրտին այլայլութենէն ու տրտա-  
մութենէն ծնկուրներուն ոյժը կը կտրէր:

Քիչ մը ետքը մութը բոլորովին կոխեց: Գեռ  
ինք բաւական ճամբայ ունէր: Քանի որ մթութիւնը  
չորս կողմը կը պատէր, իր վախն ու սարսափն ալ  
կ'աւելնար: Շփոթած ու խռոված ոգւով քիչ մը  
կը քալէր, եւ մէկէն ի մէկ օտուրները կը բռնուէին  
կը մնային: Ամէն փոքր ձայնին կը կենար չորս կող-  
մը կը նայէր, եւ տեսնելով որ իրմէ ուրիշ մէկը չկայ,  
նորէն սիրտ կ'առնէր կը սկսէր քալել: Բայց չէր կրնար  
երկայն ատեն յառաջ երթալ, առանց քանի մ'ան-  
գամ կռնակը դառնալու:

Ասանկ անձկութեամբ այրը մօտիկցաւ: Բայց ո-  
տուրներն յառաջ չէին երթար, չէր կրնար ներս  
մտնել. չէր գիտեր թէ արդեօք զՏրդատ ներսը

Թեամբ  
ստեցաւ  
կրնամ  
մը պա-  
րեն կը  
ին հա-  
  
առած՝  
կու հո-  
ջած իր  
տանե-  
ն դաշ-  
է Տըր-  
սկսաւ  
ք թա-  
: Քանի  
ունելով  
մը քովի  
չըլլայ  
էն զա-  
կապար-  
դէմքն  
յլայլած  
ութիւն  
ւ ըրած  
եան մը  
ըրաւ,  
ն տակն  
չ պա-  
Չանա-  
ինք ի-  
քովէն  
կայու-  
էր: Աս

պիտի գտնէ՞ եւ ինչպէս պիտի գտնէ: Հեւալու ձայնը զսպելով՝ վերջապէս այրին մէջ նետուեցաւ...: Տրդատայ ձայնը լսելով՝ մէկէն ի մէկ ուրախացաւ. բայց ուրախութիւնն երկայն չտեւեց, երբ որ միտ դրաւ իմացաւ թէ հառաչելու ձայն էր լսածը:

Վովը մօտիկցաւ տեսաւ որ սաստիկ ցաւոց մէջ կը տանջուէր: Ուղեց օգնութիւն մ'ընել. բայց մութի մէջ ձեռքէն ինչ կու գար: Տրդատ իր ցաւերէն յափշտակուած էր, այնպէս որ Սմբատին գալը չիմացաւ. հազիւ թէ քիչ մը ետքը վրայ գալով ու հաւատարիմ սպասաւորին հեծեծանքները լսելով՝ դարձաւ մարած ձայնով մ'ըսաւ. Ո՛ւր էիր, Սմբատ... ո՛ւր էիր, ... նախարարաց գալուստը չիմացա՞ր, որոնք զիս հրաւիրեցին... եւ երբ որ երթալ չուղեցի... ա՛հ... ընծայ տուին...: Հոս այլայլութենէն ձայնը կտրեցաւ. սաստիկ ջերմն ալ չէր թողտար որ խօսի:

Սմբատ անմիջապէս նախարարաց ըրած անօրէնութիւնն իմացաւ ու սաստիկ խռովելով՝ թագաւորին ոտուրներուն վրայ ինկաւ, սկսաւ արցունք թափել: Ո՛վ կրնար զինքը մխիթարել. Տրդատ իր ցաւոցը մէջ ուրիշէն մխիթարութիւն գտնելու կարօտ էր. Սմբատին լացքը տեսնելով՝ ինքն ալ այլայլեցաւ սկսաւ հառաչել: Սիրտ չդիմանալու տեսարան մը բացուած էր այրին մէջ: Թագաւոր մը իր նախարարներէն թիւնաւորած ու անհնարին ցաւոց մէջ յարդէ անկողնոյ մը վրայ տարածուած. հաւատարիմ ու տիրասէր պաշտօնեայ մը անոր ծնկուրներուն վրայ ինկած՝ անողայ մնացած: Գիշերուան մութն ու հանդարտութիւնն ալ աւելի եւս իրենց ողբալի վիճակը կը սաստկացընէր:

Բայց իրենց ցաւոցը սաստկութիւնը միայն արցունքով չէր կրնար դադրիլ: Սմբատ կարճ ի կարճոյ իրեն հասկըցուց թէ ինք ինչ դիտաւորութեամբ

առտուանց ճամբայ ելաւ, եւ իրիկունն ինչ վախե-  
 րով ու կասկածներով ետ դարձաւ: Թագաւորին  
 վրայ ոյժ չէր մնացեր. մէկէն վրան մարելիք մ'ե-  
 կաւ ու անշունչ մնաց: Սմբատ ոտք ելաւ, վախցաւ  
 որ չըլլայ թէ հոգին աւանդէ. գլխուն կողմը գնաց,  
 բայց մութը չէր թողուր որ կարող ըլլայ զննել: Չեռ-  
 քը ճակտին դպցուց, եւ տեսնելով թէ տաք է, իմա-  
 ցաւ որ դեռ շունչը վրան է, յոյս ունեցաւ որ լու-  
 սրննալուն կը հասնի: Լուսթեամբ քովը նստաւ ու  
 սկսաւ նախարարաց անզգամութեան վրայ մտածել:  
 Ար բարկանար ու կը ցաւէր վրանին. երբեմն սրտին  
 դառնութենէն վրանին անէծք կը կարգար, երբեմն  
 հայրենեաց վրայ ցաւելով՝ կը մորմոքէր:

Հաւատարիմ պաշտօնէին յոգնածութիւնն ու  
 այլայլութիւնն ան աստիճանի էր, որ հազիւ թէ քիչ  
 մ'ատեն անցաւ, վրան թմրութիւն մ'եկաւ ու քու-  
 նը տարաւ: Բայց Տրդատ երբեք չէր քնանար. եր-  
 բեմն վրան մարելիք կու գար, երբեմն դառն ցաւոց  
 մէջ կ'արթննար եւ սոսկալի տանջուելէն ու կրակ-  
 ներու մէջ այրելէն ետեւ՝ նորէն ինք զինքը կը կոր-  
 սրնցընէր:

լու ձայ-  
 ցաւ...:  
 ինացաւ.  
 որ միտ  
 ծը:  
 ուոց մէջ  
 այց մու-  
 ր ցաւե-  
 ին գալը  
 ալով ու  
 լսելով՝  
 Սմբատ  
 իմացա՞ր,  
 ալ չու-  
 այլայլու-  
 չէր թող  
 անօրէ-  
 ագաւո-  
 նք թա-  
 իր ցաւո-  
 րօտ էր.  
 լայլեցաւ  
 սրան մը  
 իսարար-  
 ղ յարդէ  
 րիմ ու  
 ան վրայ  
 ու հան-  
 վիճակը  
 այն ար-  
 ի կար-  
 ւութեամբ

ԱՍԱՆԿՈՎ քանի մը ժամ անցնելէն ետեւ՝ Տըր-  
դասայ ցաւերը քիչ մը թոյլցան. կրցաւ քիչ մը  
հանգիստ առնուլ. ջերմն ալ շատ տկարացաւ, վրան  
քիչ մը զօրութիւն եկաւ: Արդէն լուսըննալու սկսած  
էր, երբ որ տկար ձայնով մը Սմբատայ անունը տուաւ,  
որն որ քունն առած ըլլալով՝ մէկէն արթնցաւ վեր  
ցատքեց, եւ տեսնելով որ ջուր կ'ուզէ, ամանն առաւ  
վազեց աղբերէն լեցուց բերաւ ու քիչ մը խմցուց:

Արբոր արեւն ելլելու մօտ էր՝ Սմբատ մտադրու-  
թեամբ մը հիւանդին երեսը նայեցաւ ու զարհուրե-  
ցաւ. տեսաւ որ մահուան կապոյտ գոյն մը դէմքը պա-  
տեր էր. աչուրները մարած ու խորունկ ինկած, ճա-  
կատը գեղընցած ու բոլոր մարմինն հիւծելու սկսած  
էր: Ինք իրեն մտածած ատեն՝ որ արդեօք ճար մը  
կրնայ մի գտնել, մէկէն աչուրներուն դիպան այրին մէկ  
անկիւնը՝ զգեստներ, հաց, գինի եւ ուրիշ ուտելիք-  
ներ: Դարձաւ ընդունած ընծաներդ ասոնք են, ար-  
քայ, ըսաւ:

Ասոնք են, պատասխանեց թագաւորն ընդմիջա-  
հատած ձայնով մը. նախարարներէն մէկն իբրեւ ա-



մենուն կողմանէ ասոնք ընծայ տուաւ : Իրենք հե-  
ռանալէն ետեւ՝ ուղեցի կերակուր ուտել, գինիէն ալ  
խմեցի՝ որ զօրանամ... , գինւոյն համն աղէկ չեկաւ :  
Հազիւ թէ կէս ժամ մ'անցած էր, վրաս թմբու-  
թիւն ու գլխի ցաւ մը կոխեց . գացի անկողնոյս վրայ  
ինկայ մնացի : Քանի մը ժամ ետքը սաստիկ ցաւոց  
մէջ արթնցայ . աղիքներս կ'այրէին . որով իմացայ  
թէ իրենց անգթութեան զոհ եմ եղեր... : Ո՛հ,  
ո՛հ, հայրենեաց ըրած բարիքներուս փոխարէնն ա-  
սանկ պիտ'որ ընդունիմ եղեր... :

Տրդատ այսպէս երկրնկեկ խօսելով՝ յոգնեցաւ ու  
չկրցաւ խօսքը յառաջ տանիլ : Սմբատ մէկէն կատ-  
ղելով՝ գինւոյն ամանն առաւ, դուրս տարաւ եւ այ-  
րին գրան առջեւը գետինը զարնելով՝ Թագաւորին  
թշնամիներն Աստուած ասանկ փշրէ, պոռաց :

Չէ, չէ, կանչեց Տրդատ :

Աս ձայնը լսելով՝ Սմբատ այլայլած նորէն ներս  
մտաւ . բարկութիւնը չէր կրնար զսպել :

Հանդարտէ, Սմբատ, ըսաւ թագաւորը...  
մ'անիծաներ... անոնց չարիքն ու պատիժը՝ իմ  
սիրելի ժողովրդեանս ալ մնաս է... չեմ ուղեր որ  
անոնց պատճառաւ իմ սիրելի որդիքս նեղուին... :  
Վրաս ոյժ չունիմ... դուն իմ տեղս աղօթէ՝ որ  
Աստուած անոնց ըրածին թողութիւն տայ :

Ասոր վրայ Սմբատ ամբնալով հանդարտեցաւ,  
ու այրին մէկ կողմը նստած՝ շարունակ Տրդատայ կը  
նայէր ու կը ցաւէր : Իսկ թագաւորին աս նեղութեանց  
ժամանակը մի միայն մխիթարութիւնն ան էր որ Մա-  
նեայ այրին մէջ կը մեռնէր, ուր որ իր սուրբ ու հո-  
գեւոր Հայրն ալ մեռած էր : Նոյն պատուական Հայրը  
նորէն տեսնելու ակնկալութեամբ յափշտակուած՝  
մեծ արիութեամբ իր ցաւերուն կը համբերէր : Ինչ-  
պէս ըսինք՝ առտուան դէմ քիչ մը ցաւերը թող-  
ցած ըլլալով՝ հանդարտ ու անխռով սրտիւ մեռնե-

ւ՝ Տրդ-  
քիչ մը  
ւ, վրան  
սկսած  
տուաւ,  
ցաւ վեր  
ն առաւ  
խմցուց :  
աղբու-  
րհուրե-  
քը պա-  
ծ, ճա-  
սկսած  
ճար մը  
րին մէկ  
տելէք-  
են, ար-  
դմիջա-  
րեւ ա-

լու կը պատրաստուէր: Սիրտը քաղցր մխիթարու-  
թեամբ լեցուելով՝ նախարարաց ու իրեն ամէն չա-  
րիք ընողներուն սրտանց թողութիւն տուաւ: Մաս-  
նաւոր Ս. Լուսաւորչայ աղաչանք ըսաւ որ Հայաս-  
տան երեսէ չձգէ, օրհնէ բոլոր ազգն ու իր խնամքն  
անոնց վրայէն չհեռացընէ:

Այսպէս իր սիրելի աշխարհին եւ ժողովրդեան  
օգտին ու երջանկութեան համար սրտանց զանազան  
խնդրուածներ ընելով՝ երկայն ատեն լուս կը կենար.  
բայց երեսին շարժումներէն Սմբատ յայտնի կը տես-  
նէր որ ժողովրդեան ու Աստուծոյ մէջ հաշտութեան  
ու խաղաղութեան միջնորդ կ'ըլլայ:

Երբ որ զինքն ու ժողովուրդն Աստուծոյ ձեռքը  
յանձնեց եւ աղօթքները լմնցուց, մխիթարուած  
դէմքով մը Սմբատին դարձաւ ըսաւ. Ա՛լ մի տրտմիր,  
ուրախ եղիր, վասն զի այսօր իմ ցաւերէս պիտ'որ  
ազատիմ, այսօր պիտի հանգչիմ: Աս ըսելու ատեն՝  
կարծես թէ վրան նոր ոյժ մ'եկած, ցաւերն ալ  
աւելի դադրած էին: Ուզեց քիչ մ'ելլել ու վերջին  
անգամ մ'ալ իրեն ձեռքը մշակած տեղերը տես-  
նելով՝ իր կենաց ետքի օրերուն հիւրընկալու տեղե-  
րուն՝ հրաժարական ողջոյնը տալ: Սմբատ անմիջապէս  
քովը գնաց ու իրեն օգնելով՝ յարգէ անկողնոյն  
վրայ նստեցուց: Քիչ մ'ատեն անանկ կենալէն ե-  
տեւ՝ թեւը մտաւ, ոտք հանեց, սկսաւ դէպ ի այ-  
րին դուռը տանիլ: Երբ որ դրան մօտիկցան, Տրդատ  
քարի մը վրայ նստելով հանգչեցաւ. թէպէտ միայն  
քանի մը ոտք առած էր, բայց շատ յոգնեցաւ:

Վիչ մը ետքը ուզեց այրէն դուրս ելլել. Սմբատ  
նորէն թեւը մտաւ ու գրեթէ շալկելով՝ սկսաւ օգ-  
նել ու վեր բռնել որ կարող ըլլայ քալել: Մեծ  
դժուարութեամբ այրէն դուրս հանեց ու մօտիկ  
եղած արտը տարաւ, պատրաստուած յարդերուն  
վրայ նստեցուց: Աս պզտիկ ճամբորդութեամբ Տրդ-

իթարու-  
ամէն շա-  
ու : Մաս-  
ն Հայաս-  
ն խնամքն  
զովորդեան  
զանազան  
ը կենար-  
կը տես-  
ուութեան  
ոյ ձեռքը  
թարուած  
տրամիր,  
ս պիտ'որ  
ու ատեն'  
ուերն ալ  
ւ վերջին  
րը տես-  
ու տեղե-  
միջապէս  
անկողնոյն  
նալէն ե-  
պ ի այ-  
, Տրդատ  
նտ միայն  
ոգնեցաւ :  
Սմբատ  
խառ օգ-  
լ : Մեծ  
ւ մօտիկ  
որդերուն  
ամբ Տըր-

դատ շատ յողմած կ'երեւար . քիչ մ'ատեն կենա-  
լէն ետեւ՝ սկսաւ տկար հայեցուածով մը չորս կող-  
մը նայիլ : Արեւը պայծառ ծագած էր ու զինքը կը  
տաքցընէր . քաղցր հով մ'ալ իր քովի փոքր ծա-  
ռոց կէս տերեւաթափ ճիւղերը կամաց կամաց կը  
շարժէր : Թագաւորը քաղցր աչքով մը իր ձեռքը  
մշակած արտին կը նայէր : Իր տնկած ծաղիկներուն  
կիսաթարչամ մնացորդէն Սմբատ քիչ մը փրցուց  
բերաւ , որն որ ընդունեցաւ ու քովը դրաւ ըսելով ,  
Ահա իմ կեանքս ալ ասոնց պէս լմրննալու վրայ է :

Եւ ամէ մ'աւելի նոյն տեղը կենալէն ետեւ՝ ձայն  
տուաւ Սմբատայ ու իմացուց որ ալ կ'ուզէ այրը  
դառնալ : Հոս երկուքին վրայ ալ նորէն սաստիկ  
տրամուլթիւն մը տիրեց . գիտէին որ աս վերջին ան-  
գամն է որ արեւու լոյսը կը վայելէ . գիտէին որ ա-  
մէն մէկ քայլ առնելը՝ մահուան աւելի մօտիկնալ է :  
Աս տրամուլթիւններով Սմբատ զինքն ոտք  
հանեց ու սկսան կամաց կամաց յառաջանալ : Ծեր  
թագաւորը շարունակ դէպ ի դետին խոնարհելով ու  
ցուրտ քրտինք թափելով՝ ոտք կ'առնէր , բայց ա-  
ռանց քանի մ'անգամ կանգ առնելու՝ չէր կրնար  
քիչ մը յառաջ ելթալ : Երբոր այրին դրան մօտիկ-  
ցան , հոն ուզեց քիչ մ'ալ հանգչիլ ու արեւուն  
լոյսը վայելել . բայց ինչ օգուտ , իր սառած ան-  
գամները չէին կրնար ան ջերմութեամբ տաքնալ :

Ա'իմանար Տրդատ որ ալ վերջը մօտիկ է , ալ  
աս աշխարհքէն պիտի հեռանայ : Ուզեց իր որդւոյն  
ալ վերջին բարեւ մը խրկել , իր վերջին խրատն ու  
օրհնութիւնն անոր տալ : Սմբատը քովը նստեցուց ,  
ձեռքը բռնելով յանձնեց որ իր մեռնելէն ետեւ՝ ան-  
միջապէս Խոսրովին քովը դառնայ , պատմէ անոր իր  
ծեր հօրը վերջին օրերը , քաշած նեղութիւններն ու  
վշտերը , եւ Հայ ազգին վրայ ունեցած դուլթն ու  
տէրը : Արան մնացած վերջին ուժը ժողովելով՝ Իբրեւ

կտակ կը թողում իրեն որ, ըստ, իր նախարարացը շատ չվստահի. իսկ հպատակներն հօր պէս խնամէ, անոնց սէրը վաստակի, չէ թէ վախցընելով տիրէ:

Տրդատ աս վերջին սրտաշարժ խօսքերը զրուցած ատեն՝ Սմբատ գետինը նայելով շարունակ արցունք կը թափէր: Աւերջապէս թագաւորը բոլոր նոյն տեղերուն վերջին բարեւը տալէն ետեւ՝ իր գերեզմանը մանելու կ'աճապարէր. մտան այրին մէջը: Սմբատ նորէն զինքը յարդէ անկողնոյն վրայ պառկեցուց ու հանգչեցուց, եւ գիտնալով որ ալ ելելէք չունի, կոտրած սրտով մը ոտքին քովը նստեցաւ:

Աս փոքրիկ ճամբորդութիւնը Տրդատայ բոլոր դժբախտ սպառած էր. տկարութենէն քիչ մ'ատեն անզգայ մնաց: Սմբատ ամէն բոպէ անհանգարտ սրտի վրան կը հսկէր ու կը զգուշանար. անմխիթար կուրար եւ ինք զինքը մոռցած՝ բոլոր մտադրութիւնը հիւանդին վրայ ժողված էր:

Տրդատ կէս օրը հաղիւ աչքը բացաւ: Նորէն ցաւերու ովկիանոսի մը մէջ ընկղմած էր. թոյնն իր վերջին ուժգնութեամբը՝ տկարացած մարմնոյն հետ կը կռուէր ու սաստիկ ցաւ կը պատճառէր: Քանի գնաց երեսին գոյնը նետեց: Ալ ամենեւին բերանը չէր բանար: Սմբատ աւելի քովը մօտեցաւ: Քիչ մը վերջը թագաւորն սկսաւ մահուան քրտինք թափել . . . . վերջին խօսքը՝ Տէր Աստուած ընկալ զիս, եղաւ . . . .: Անկէ ետեւ ալ բոլորովին խօսքը կորսընցուց: Սմբատայ ձեռքը բռնեց ու շարունակ անոր աչքին նայելով՝ կ'ուզէր իմացընել թէ հրաժարական ողջոյնը կու տայ: Սմբատ իմացաւ իր տիրոջն, իր թագաւորին վերջին կամքը, անոր պաղած ձեռքը բռնեց, կրկին կրկին կը պագնէր եւ յորդ արցունքովը կը թրջէր. նորէն կը պագնէր եւ չէր գիտեր թէ ինչ նշաններով իր յարգութիւնը, սէրն ու ցաւը յայտնէր:

Այս ժամ մ'անցնելէն ետեւ՝ Տրդատայ քրտինքը

դադրեցաւ ու բոլոր մարմինը պաղելու սկսաւ . աչու-  
 ները կը գոցուէին . ո՛հ ան արթուն աչուքներն՝ ալ  
 մէյ մ'ալ չբացուելու համար՝ կը գոցուէին , ալ ան  
 երկու ջահերը Հայաստանի վրայ իրենց լոյսը պիտի  
 չտարածէին . . . . . : Թագաւորը բոլորովին ինք զին-  
 քը կորսընցուց եւ հանդարտութեամբ սկսաւ վերջին  
 շնչերն առնուլ տալ : Սմբատ արցունք թափելէն յոգ-  
 նած՝ շարունակ Տրդատայ համար կ'աղօթէր : Հիւան-  
 դին հոգեվարքն երկու ժամի չափ տեւեց : Արեւն  
 աշխարհքիս վրայէն իր ճառագայթներն ամփոփելու  
 վրայ էր , Տրդատ խորունկ ու վերջին շունչ մ'ալ  
 առաւ , եւ ալ չկար . մարմինն անշունչ դիակ մըն  
 էր , իսկ հոգին գնաց իր յաւիտենական բնակարանն ,  
 իր աշխատութեանց վարձքն առնելու :

Սմբատայ արցունքները նորոգուեցան , տիրոջն  
 անշնչացեալ մարմնոյն վրայ ինկաւ , սկսաւ լալով  
 անուշը կանչել , անմխիթար հեծել ու ողբալ : Նոյն  
 իրիկունն ու բոլոր գիշեր ասանկ լացքով ողբով ան-  
 ցընելէն ետեւ՝ երկրորդ առտու ելաւ որ մարմինը  
 հողոյ աւանդէ : Խոր տրտմութեամբ երեսը նայելով  
 տեսաւ որ զուարթ դէմք մը ստացած էր , որով հո-  
 գւոյն երջանկութիւնը կը գուշակուէր : Քիչ մը ետքը  
 այրին առջեւը յարմար տեղ մը գտնելով՝ փորեց ,  
 եւ գերեզմանը պատրաստելով՝ Տրդատայ մարմինը  
 հոն թաղեց :

Վանի մը ժամ ալ կենալէն ու նոյն տեղերուն  
 վերջին բարեւ մ'ալ տալէն ետեւ , ետ դարձաւ որ  
 Խոսրովին քովն երթայ ու ամէն բան պատմելով՝  
 փառաւոր թաղման պատրաստութիւն մը տեսնուի ,  
 որն որ իրօք ալ կատարուեցաւ , որով նոյն այրը նո-  
 րէն իր տխուր առանձնութեան մէջ մնաց :



